Քրիստոնյա Հայաստան

2025, ՀՈՒՆԻՍ Ա, ԹԻՎ 11 (679)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողով

Հունիսի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողով, որին մասնակցում էին եպիսկոպոսներ և թեմակալ առաջնորդներ Հայաստանից ու սփյուռքից:

Ժողովում քննարկվեցին հայրենիքի առջև ծառացած մարտահրավերներին, եկեղեցի–պետություն հարաբերություններին և հասարակությանը հուզող մի շարք հիմնախնդիրների առնչվող հարցեր:

Մասնավոր անդրադարձ կատարվեց վարչապետի կողմից վերջին օրերին հրահրված հակաեկեղեցական ամոթալի արշավին: Այս կապակցությամբ Գերագույն հոգևոր խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ:

Հայտարարություն

Հայաստանի վարչապետը պետական այրին անհարիր բառապաշարով, վիրավորանքներով և մեղադրանքներով հերթական արշավն է սկսել ընդդեմ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ օրենքից վեր դասելով իր անձը:

Հայհոյախառն, անվայել խոսույթներով հախուռն հրապարակումները զուրկ են բարեկրթության տարրական նորմերից, ոտնահարում են մարդու հիմնարար իրավունքները, կոպտորեն վիրավորում հավատացյալների կրոնական զգացմունքները և սքողվում կեղծ սրտացավության հիմնավորումներով:

Եկեղեցամարտ այս կեցվածքը ակնհայտորեն թելադրված է քաղաքական նպատակներով և փորձ է նսեմացնելու ազգային կյանքում և միջազգային շրջանակներում հարգանք վայելող Հայոց Եկեղեցու և եկեղեցականաց հեղինակությունը, լռեցնելու Եկեղեցու ձայնը և նվազեցնելու նրա հանրային ազդեցությունը: Կառավարության ղեկավարի հակաեկեղեցական պահվածքը, ազգային արժեքների և Եկեղեցու դեմ նախաձեռնած գործընթացները հղի են կործանարար հետևանքներով և սպառնալիք՝ հայոց պետականությանը, մեր ժողովրդի միաբանությանը թե՛ հայրենիքում և թե՛ սփյուռքում: Այսպիսի գործողությունները պառակտում են հասարակությանը, տկարացնում են ազգի ոգին և հայրենանվիրումի բարձր գիտակցությունը հատկապես առկա մարտահրավերների պայմաններում: Նման դատապարտելի ձեռնարկումները սպասարկում են արտաքին հայատյաց ուժերի նկրտումները՝ որոշակիորեն կապակցվելով ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն ուղղված զրպարտությունների և կեղծ մեղադրանքների հետ:

Հայոց Եկեղեցին, գիտակից իր հանձնառություններին, անշեղորեն շարունակելու է հոգեփրկչական և ազգապահպան առաքելությունը՝ ընդդիմանալով ազգավնաս ու կործանարար ընթացքներին և մշտապես հետամուտ լինելով պետության ու ազգի գերակա շահերի, մեր սրբազան արժեքների պաշտպանությանը:

Եկեղեցու հարցերը լուծվում են եկեղեցական կարգերի ու կանոնների համաձայն և դուրս են պետական և քաղաքական գործիչների իրավասությունից: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեկ ամբողջություն է իր հավատացյալ զավակներով և զինվորագրյալ հոգևորականներով՝ ի գլուխ ունենալով ազգընտիր Ամենայն Հայոց Հայրապետին: Կոչ ենք ուղղում իրավասու պետական մարմիններին՝ կասեցնել վարչապետի այս անօրինական և անհեռատես քաղաքականությունը: Հարկ չկա Եկեղեցին ներքաշելու արհեստական օրակարգեր և մղելու հակադարձման գործողությունների:

Այս նոր փորձության հանդիման հորդորում ենք մեր Սուրբ Եկեղեցու հավատավոր զավակներին լինել միաբան ու միասնական, առ հայրենին և Սուրբ Եկեղեցին հավատարմությամբ ու զորեղ հավատքով հաղթահարել մեր ժողովրդի առջև ծառացած բոլոր մարտահրավերները և երբեք թույլ չտալ մեր ազգային հիմնասյուների սասանումը: Թող այս մերժելի մեքենայությունները պատճառ չդառնան հիասթափության և գայթակղության:

Աղոթում ենք առ Փրկիչ մեր Տեր Հիսուս Քրիստոս, որ վնասաբեր երևույթներով չխաթարվի հայրենական կյանքը, և աշխարհասփյուռ մեր ժողովուրդը ապրի խաղաղության, բարօրության և առաջընթացի մեջ: Թող Տերը անսասան պահի հայոց պետականությունը և պայծառ՝ Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ հավատավոր իր բոլոր զավակներով:

ՀՀ առաջին նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հունիսի 7-ին, Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանն այցելել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և առանձնազրույց ունեցել Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ:



Զրույցի ընթացքում նախագահն իր լիակատար աջակցությունն է հայտնել Վեհափառ Հայրապետին՝ միաժամանակ խստիվ դատապարտելով ավելի քան 1700-ամյա Հայոց Եկեղեցու նկատմամբ ՀՀ իշխանությունների հակասահմանադրական ոտնձգությունը:

Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց ԱՄԷ

Հունիսի 9-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկօրյա այցով մեկնեց Արաբական Միացյալ Էմիրություններ, ուր հանդիպում կունենա Կալկաթայի Սուրբ Նազարեթ եկեղեցու և Հայոց Մարդասիրական ճեմարանի հոգաբարձուների հետ՝ ճեմարանի գործունեությանն ու համայնքային կյանքին առնչվող հարցերի շուրջ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի ուղերձը օդանավակայանում իրեն դիմավորելու եկած հազարավոր քաղաքացիներին

Սիրելինե՛ր, գիտենք, որ դուք եկել եք այստեղ՝ ձեր վրդովմունքը արտահայտելու վերջին օրերին հանրապետության վարչապետի կողմից Եկեղեցու և մեր եկեղեցականության հասցեին թույլ տրված արտահայտությունների առնչությամբ: Գիտենք, որ այդ արտահայտությունները՝ հնչեցված վարչապետի կողմից, համընդհանուր վրդովմունք են առաջ բերել մեր ժողովրդի զավակաց մեջ՝ ի սփյուռս աշխարհի:

Հավատում եմ, որ Աստծո ողորմությամբ և օգնականությամբ, ձեզ հետ միասին խոհեմորեն, առանց ավելորդ հուզականության, ընդվզումների՝ պիտի կարողանանք հաղթահարել այս դժվարությունը:

Ամո՛ւր մնացեք ձեր հավատքի և առ Եկեղեցին ունեցած ձեր սիրո և հավատարմության մեջ: Մենք ձեր այս վերաբերմունքը գնահատում ենք, բայց նաև ցանկանում ենք ասել, որ այն առավել ևս պարտավորեցնում է մեզ՝ եկեղեցականներիս, մեր առաքելությունը նույն նվիրումով ու հավատարմությամբ առ ձեզ, առ հայրենին մեր իրականացնելու արդյունավոր կերպով, անշեղորեն: Եվ մեր հորդորը պիտի լինի ձեզ միաժամանակ, սիրելինե՛ր, որ այս դժվարին ժամանակներում ամուր ու հաստատուն պահենք միաբանությունը ազգային մեր կյանքում, թո՛ւյլ չտանք, որ որևիցե կերպ մեր կյանքում տեղ գտնեն այնպիսի արարքներ ու գործողություններ, որոնք կվտանգեն մեր ազգային միասնությունը: Մենք հավատում ենք, որ մեր միասնական ջանքերով, մեր կարողությունների մեկտեղումով պիտի կարողանանք դիմակայել բոլոր փորձություններին և հարթել մեր կյանքի բոլոր դժվարությունները, լավատեսությամբ, հույսով և հավատով կերտել մեր և մեր զավակների վաղվա պայծառ օրը:

Աստված օգնական ու պահապան մեր ժողովրդին, այսօր և հավիտյանս....

10 հունիսի, 2025 թ.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հունիսի 3-ին **Լիբանանից ժամանած քույր եկեղեցիների ներկայացուցիչներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ուխտավորաբար Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանած Մելկիտ Հունա-Կաթոլիկ եկեղեցու Լիբանանի և Զահլե և Ֆուրզոլի թեմի առաջնորդ Իբրահիմ եպիսկոպոս Իբրահիմին, Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Ուղղափառ եկեղեցու Լիբանանի, Զահլեի և Բաալբեքի թեմի առաջնորդ Միտրոպոլիտ Անտուան Էլ Սուրիին՝ ուղեկցությամբ «Գարդենիա Լեբնիզ Ֆարմս» ընկերության հիմնադիր տնօրեն Նիկոլաս Աբու Ֆայսալի: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց հյուրերին՝ գոհունակությամբ անդրադառնալով քույր եկեղեցիների հետ առկա փոխհարաբերություններին:

Իրենց հերթին Իբրահիմ եպիսկոպոս Իբրահիմը և Միտրոպոլիտ Անտուան Էլ Սուրին շնորհակալություն հայտնեցին Ամենայն Հայոց Հայրապետին ընդունելության համար՝ իրենց զորակցությունն ու աղոթակցությունը բերելով Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին:



Հունիսի 8-ին **Ավստրալիայից ժամանած ուխտավորներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմից ժամանած ուխտավորներին՝ ուղեկցությամբ Մելբուռնի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Խաչեր քահանա Հարությունյանի:

Տեր Խաչեր քահանան Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ մինչև Հայաստան ժամանելը ավստրալահայերն ուխտավորաբար եղել են Արևմտյան Հայաստանում և այժմ, գտնվելով հայրենիքում, այցելել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ ստանալու Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնությունը:

Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը փոխանցելով հայորդիներին, գոհունակությամբ անդրադարձավ Ավստրալիայի հայ համայնքի հայրենանվեր ու եկեղեցասեր կյանքին: Նորին Սրբությունը նկատեց, որ աշխարհասփյուռ հայոց թեմերից նման ուխտագնացությունների կազմակերպումը հայրենիքի համար դժվարին այս օրերին գոտեպնդում է հայրենաբնակ իրենց եղբայրներին ու քույրերին:

Այս առնչությամբ Հայոց Հայրապետը հորդորեց ներկաներին, որ իրենց այցի շրջանակներում նաև հանդիպումներ ունենան հայրենազրկված արցախցիների հետ՝ ի մոտո ծանոթանալու նրանց առջև ծառացած մարտահրավերներին և իրենց աջակցությունն ու զորակցությունը բերելու նրանց:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուխտավորներին մաղթեց, որ Աստված մշտապես պահի ու պահպանի նրանց Իր սիրո և խնամքի ներքո:

Հունիսի 12-ին **Հայագիտական դասընթացներին մասնակից սփյուռքահայ երիտասարդներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հունիսին մեկնարկված հայագիտական և կրոնագիտական դասընթացներին մասնակցելու նպատակով սփյուռքի տարբեր թեմերից ժամանած երիտասարդներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռում կազմակերպված դասընթացների նպատակն է զորացնել երիտասարդների հայոց լեզվի և պատմության իմացությունն ու հոգևոր գիտելիքները, ինչպես նաև հնարավորություն ընձեռել հաղորդ դառնալու հայրենիքի հոգևոր-մշակութային ժառանգությանն ու արժեքներին: Հայորդիների համար կազմակերպվում են նաև մշակութային ծրագրեր և ուխտագնացություններ դեպի տարբեր սրբավայրեր:

Ծրագիրը համակարգում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը: Ծրագրին կազմակերպչական հարցերին իրենց օգտակարություն են բերում նաև Ղազարավանի միանձնուհիները:

Զրույցի ընթացքում, իր հայրական օրհնությունը բերելով սփյուռքահայ երիտասարդներին, Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց Սուրբ Էջմիածնում վերջիններիս համախմբման առիթով, հետաքրքրվեց նրանց առօրյայով և ուսումնառության ընթացքով: Վեհափառ Հայրապետը մասնավորապես ընդգծեց դասընթացների կարևորությունն ու օգտակարությունը գիտելիքների հարստացման, ազգային ոգու, առ հայրենին ու ազգայինը սիրո առավել ամրապնդման առումով:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց երիտասարդ հայորդիներին համախումբ լինել Հայոց Եկեղեցու շուրջ, ջանասիրությամբ շարունակել ուսումը և ձեռք բերած գիտելիքներով հարստացած, իբրև ազգի արժանավոր զավակներ, իրենց ներդրումն ունենալ հայրենիքի ու աշխարհասփյուռ հայ համայնքների առավել զորացման գործում:

Հոգեգալստյան Պատարագ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Հունիսի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նշվեց Հոգեգալուստի տոնը: Տոնական պատարագը, որին ներկա էր նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը, մատուցեց Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը: Ընթերցվեցին Ս. Հովհան Ոսկեբերանի՝ Սուրբ Հոգուն նվիրված աղոթքները:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Արարատյան շաբաթ

2025 թ. հունիսի 16–22-ը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշելու է Արարատյան շաբաթվա տոները, որոնց առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հավատացելոց երկրպագության համար դուրս կբերվեն Սուրբ Էջմիածնի սրբազան մասունքներ:

Ստորև ներկայացնում ենք արարողությունների ժամանակացույցը:

Հունիս 16 — Սուրբ Հռիփսիմյանց կույսերի տոն

- ժամը 10:30-ին՝ Սուրբ և Անմահ Պատարագ Սուրբ Հռիփսիմե վանքում,
- ժամը 9:30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկեղեցական թափորով Սուրբ Հռիփսիմե վանք կտարվեն Սուրբ Հռիփսիմե կույսի մասունքները,
- Սուրբ Պատարագի ավարտին կկատարվի Անդաստանի կարգ:

Հունիս 17 — Սուրբ Գայանյանց կույսերի տոն

- ժամը 10:30-ին՝ Սուրբ և Անմահ Պատարագ Սուրբ Գայանե վանքում,
- ժամը 10:00-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկեղեցական թափորով Սուրբ Գայանե վանք կտարվեն Սուրբ Գայանե կույսի մասունքները,
- Սուրբ Պատարագի ավարտին կկատարվի Անդաստանի կարգ:

Հունիս 19 — Սուրբ Հովհաննես Կարապետի և Աթանագինե եպիսկոպոսի տոն

- ժամը 10:30-ին՝ Սուրբ և Անմահ Պատարագ Սուրբ Շողակաթ վանքում, ուր կտարվեն Սուրբ Հովհաննես Մկրտչի և Աթանագինե եպիսկոպոսի մասունքները:

Հունիս 21 — Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ Վիրապից ելնելու տոն

- ժամը 10:30-ին՝ Սուրբ և Անմահ Պատարագ Խոր Վիրապի վանքում, ուր տոնի առիթով կտարվեն Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքները:

Հունիս 22 — Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոն

- ժամը 11:00-ին՝ Սուրբ և Անմահ Պատարագ Միածնաէջ Մայր Տաճարում,
- Սուրբ Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կկատարվի մաղթանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության և հավետ պայծառության համար:

Տոնի առիթով դուրս կբերվեն՝

1. Տիրոջ Կենաց Փայտի մասունքը,
2. Աստվածամուխ Սուրբ Գեղարդը,
3. Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը,
4. Սուրբ Սահակ Պարթև Հայրապետի մասունքը,
5. Սուրբ Գրիգոր Նարեկացու մասունքը,
6. Հայոց Ցեղասպանության սուրբ նահատակների մասունքարանը,
7. Սկևռայի մասանց պահարանը:

Մասունքները ժողովրդի երկրպագության համար կմնան մինչև 18:00-ն:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ներումը՝ քրիստոնեական վարք

Ներողամտությունը քրիստոնեական կյանքի մեծագույն պատվիրաններից է: Առհասարակ, քրիստոնեությունը կարելի է սահմանել որպես Արարչի՝ Իր արարածների մեղքերը ներելու սքանչելախորհուրդ հանձնառություն. «Եկէք իրար հետ քննենք,– Տիրոջ խոսքը երկրորդում է Եսայի մարգարեն,– եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիր են, ապա ես ձյան պես ճերմակ կդարձնեմ, եթե որդան կարմիր լինեն, կսպիտակեցնեմ բրդի պես» (Ես. 1:18): Աստված, առանց պատժելու սարսափեցնող նախապայմանի, կոչ է անում մարդկությանը՝ քննելու սեփական մեղքերը, անդրադառնալու դրանց կործանարար հետևանքներին, Իր՝ Տիրոջ օգնականությամբ նոր, սրբագործված մարդ դառնալու: Այս հրավերը չի ճանաչում ոչ մի պատնեշ. այն վեր է ազգային պատկանելությունից, հասարակական բաժանումներից, լեզվական ու մշակութային առանձնահատկություններից: Այն հաշտության մեկնված ձեռք է դեպի բոլոր ազգերը, սերունդներն ու ժողովուրդները:

Սուրբ Գրքում ներկայացվող առաջին մարդկանց անմեղ ընթացքն արգելված պտղի ճաշակումից հետո շեղվեց՝ սկզբնավորելով մեղքի տարածման անվերջանալի շղթան: Այդ մեծ շղթայի օղակներ են Կայենի նախանձոտությունը, Աբելի սպանությունն ու Ղամեքի մարդասպանությունը, նոյյան ջրհեղեղից առաջ մարդկանց համատարած բարոյալքվածությունը, բաբելոնյան շինարարների գոռոզամտությունը, Սոդոմի ու Գոմորի այլասերությունը, Հակոբի՝ իր եղբայր Եսավի անդրանիկության հանդեպ ունեցած հավակնոտությունը, Հովսեփի եղբայրների չարամտությունը և այսպես շարունակ: Անհատական օրինազանցություններն աստիճանաբար ստացան տարերային բնույթ՝ ընդգրկելով համայն ազգերն ու ժողովուրդները, և չարիքի յուրաքանչյուր դրսևորումով մարդկությունն էլ առավել հեռացավ իր Արարչից՝ աստիճանաբար կորցնելով անմիջական հաղորդակցությունն Աստծու հետ:

Մեղքի տարածումն աշխարհի չորս ծագերում կատարվեց անկկատ, կայծակնային արագությամբ՝ նման համավարկներին: Մարդիկ սկսեցին հակվել դեպի մեղքը, որովհետև մեղքը, կարծես, վերածվեց օրինաչափության, և բոլորը մեղավորությամբ կապվեցին միմյանց: Այսպես՝ եթե Կայենը սարսափում էր, որ իր եղբայր Աբելին սպանելու համար մարդիկ վրեժխնդիր կլինեն իրենից (տես Ծնն. 4:14), ապա հետագայում, երբ գործվել էին բազմաթիվ սպանություններ, մարդասպաններն այլևս չէին վախենում հասարակական վրեժխնդրության հուժկու դատաստանից, որովհետև սպանությունը, կարծես, բնական օրինաչափություն էր դարձել:

Ճիշտ նույն տրամաբանությամբ՝ այսօր էլ անկառավարելի մեղսալից բարքերը ծնում են բարոյալքված հասարակություններ, որոնց շրջանում պատվիրանազանցությունը դառնում է օրինաչափություն, Աստծու հաստատած օրենքները ոտնահարվում են համընդհանուր կերպով, և մարդկությունն ինչ-որ պահի սկսում է անգամ մոռանալ, որ երբևէ եղել են ի վերուստ սահմանված հստակ պատվիրաններ:

Այսօրինակ պատմություններով հարուստ է Սուրբ Գիրքը: Մարդկության առաջին հավաքական մեղավորության պատկերը ներկայացվում է Նոյի ժամանակներում. «Տերը՝ Աստված, տեսավ, որ երկիրն ապականված է, որովհետև բոլորը երկրի վրա ապրում էին անօրեն կյանքով» (Ծնն. 6:12): Աստված պատժեց մարդկությանը, պատժեց ջրհեղեղով՝ փրկելով միայն Նոյին ու նրա ընտանիքը: Բայց կործանարար ջրհեղեղից հետո Տերն ուխտ կապեց Նոյի հետ՝ ասելով. «Այլևս երկիրը չեմ անիծի մարդկանց գործերի համար: Քանի որ մարդկանց միտքը մանկուց շարունակ ձգտում է դեպի չարը, այլևս երբեք կենդանի ոչ մի էակի չեմ ոչնչացնի» (Ծնն. 8:21): Այսկերպ Աստված առաջին անգամ մարդկությանը խոստացավ պատժի փոխարեն ներել, մահվան փոխարեն կյանք շնորհել: Մարդկությունը, իհարկե, չդադարեց ապրել մեղանչումով: Դեռ ավելին՝ մարդկային հնարամտությունն ստեղծեց մեղքի ու չարիքի տարածման շատ ավելի մեծ մեքենայություններ և գերազանցեց Նոյի ժամանակների հասարակական եղծված բարքերը, սակայն Տիրոջ՝ Իր զավակներին ներելու որոշումը երբեք ու երբեք չկորցրեց իր ուժը:

Հետաքրքրական է նկատել, որ Սուրբ Գրքում Աստված բազմիցս կարևորագույն ծրագրեր է իրականացնում հենց մեղավոր մարդկանց միջոցով: Մովսեսի եղբայր Ահարոնը, տուրք տալով ժողովրդի կռապաշտական ցանկություններին, ոսկե հորթ պատրաստեց և հանձնեց Սինա լեռան ստորոտում հավաքված Իսրայելի ժողովրդին, որ նյութեղեն կուռքը դարձնեն իրենց պատկերացումների չաստվածը: Արարիչ Աստված, սակայն, միևնույնն է, հենց Ահարոնին կարգեց քահանայապետ և իր ազգատոհմին՝ Աստծու քահանայական ցեղ:

Տիրոջ առջև մեղավոր էր նաև Դավիթ թագավորը, որը լինելով Աստծու ընտրյալն ու օծյալը և ունենալով մեծամեծ կարողություններ, սպասավորներ, ենթականեր, անձնական իշխանության տակ գտնվող զինվորականներ ու գործիչներ, ի վերջո, ունենալով Բարձրյալի անմիջական առաջնորդությունը՝ ընթացավ մեղանչումի ճանապարհով, դավադրորեն սպանեց իր լավագույն զորավարներից քետացի Ուրիային և տիրացավ նրա վայելչագեղ կնոջը՝ Բերսաբեեին: Այսուհանդերձ, Աստված հենց Դավթի միջոցով կատարեց մարդկության փրկության Իր ծրագիրը. Փրկիչը՝ Աստծու Որդին, Դավթի Որդի անվանվեց:

Մեղավոր էր և Պետրոսը, երբ Հիսուս առաջին անգամ հանդիպեց նրան և Գեննեսարեթի ծովակում մեծ քանակությամբ ձկներ որսալու հրաշքը կատարեց: Սիմոն Պետրոսը՝ հասկանալով, որ հրաշքի հետևում կանգնած է Աստված, փաթաթվեց Հիսուսի ծնկներին ու ասաց. «Ինձնից հեռու գնա, Տեր, որովհետև ես մեղավոր մարդ եմ» (տես Ղուկ. 5:8): Հետագայում Պետրոսը քահանայապետի տան բակում նաև պետք է երեք անգամ ուրանար իր սիրելի Վարդապետին: Պետրոսի մեղավորության այս բոլոր հանգամանքները, սակայն, երբեք չխոչընդոտեցին, որ նա առանցքային դեր ունենա քրիստոնեության ձևավորման, կայացման և տարածման առաքելության մեջ՝ դառնալով այն վեմը, որի վրա Աստված հաստատեց Իր Սուրբ Եկեղեցին:

Հեթանոսների առաքյալ Պողոսը նույնպես զերծ չէր մեղքերից ու չարագործություններից: Նախքան Տիրոջ կողմից կանչվելը նա էլ անողորմաբար կտտանքների էր ենթարկում Քրիստոսին հավատացողներին և Աստծու Որդու անվան համար պայքարողներին: Աստված, սակայն, Դամասկոսի ճանապարհին կանչեց Պողոսին, անդամագրեց Իր առաքյալների ընտրյալ բանակին, և ևս մեկ մեղավոր ու չարագործ մարդ դարձավ Աստծու պատգամաբերն ու սպասավորը:

Այս ստվարաթիվ օրինակները պարզապես արձանագրումներ են ճշմարիտ այն իրողության, որ Աստված, իսկապես, կարող է բեկել մարդկանց սրտերը, մեղավորներին՝ մաքրագործել, անբարեգութ մարդկանց դարձնել ողորմած, չարիք պատճառողներից բարություն բխեցնել: Մարդկանց հոգիները շրջող և սրտերը հեղափոխող այդ ուժն աստվածային ներողամտությունն է, որի աղբյուրը սերն է: Աստված Իր օրինակով սովորեցնում է համայն արարածներին, որ չարությանը հնարավոր է հաղթել միայն բարությամբ, ատելության պարտությունը սիրո առատությամբ է լինում, իսկ սերը, համաձայն առաքյալի խոսքի, մեծահոգի է, բարյացակամ, չի նախանձում, չի մեծամտանում, չի գոռոզանում, միշտ տոկում է, միշտ հավատ է ընծայում, միշտ հույս տածում, միշտ համբերում է: Ահա թե ինչու է Աստված համբերում կամ հանդուրժում, երբ որևէ մեկը սպանում է, դաժանություն է գործում, ցավ է պատճառում:

Աստված համբերում է, որովհետև համբերությունը սիրո հատկանիշ է, իսկ սերը համբերում է, որ պատիժը վերածվի ներման: Չէ՞ որ Աստված կարող էր վայրկենապես պատժել Հիսուսին խաչ հանող և ծաղրուծանակի ենթարկող զինվորներին, կամ այն զինվորը, որ քացախով և լեղիով խառնված սպունգը մոտեցնում էր տանջամահ լինող Քրիստոսի շուրթերին, կարող էր Աստծու ցասման ողջ զորությամբ դատապարտվել հենց խաչի առջև: Հրեա պաշտոնյաները խարդավանքների ու կեղծիքի գնով մի անմեղ մարդու խաչ հանեցին, մինչդեռ Աստված Իր օրենքների ու մարգարեների միջոցով խստագույնս պատվիրել էր զերծ մնալ բանսարկությունից և արդարությունը խեղաթյուրելուց: Այդուհանդերձ, այս բոլոր մարդիկ չպատժվեցին, որովհետև Տիրոջ բարկությունը երբեք ավելի մեծ չէ, քան Նրա ներողամտությունը, իսկ ներողամտությունը համբերում է այնքան, մինչև մարդը կանդրադառնա իր ընթացքին և դարձի կգա չար ճանապարհից:

Աստվածային ներումը Նոր Կտակարանում հասնում է իր գագաթնակետին Հիսուս Քրիստոսի միջոցով: Իր երկրային առաքելության ողջ ընթացքում Հիսուս ոչ միայն ուսուցանում է ներումի կարևորությունը, այլև այն մարմնավորում Իր գործողություններով: Ներողամտության մասին Աստծու մարմնացյալ Որդու ամենակարևոր ուսուցումներից մեկը դրսևորվեց այն ժամանակ, երբ Պետրոսը հարցրեց Հիսուսին, թե քանի՞ անգամ պետք է ների Իր դեմ մեղանչողին, և Հիսուս պատասխանեց. «Քեզ չեմ ասում մինչև յոթ անգամ, այլ մինչև յոթանասուն անգամ յոթ» (Մատթ. 18:22)՝ ցույց տալով, որ ներումը չի կարող սահմանափակվել թվերի, չափերի կամ հաշիվների մեջ. ներումը պետք է լինի անսահման: Քրիստոսի այս ուսուցումը ոչ միայն հորդոր էր մարդկային հարաբերությունների վերաբերյալ, այլև աստվածային ողորմության բանաձևի բացահայտում, որտեղ ներումը չունի չափ ու սահման:



Ռեմբրանդտ վան Ռեյն. Անառակ որդու վերադարձը, 1666/1669 թ.

Քրիստոնյաների համար ներումն անընդհատական սիրո գործողություն է, արմատական հրաժարում՝ վրեժխնդրության կամ նեղսրտության մարդկային հակվածությունից: Ներումի կարևորությունը մասնավոր կերպով ընդգծվում է հատկապես Տերունական աղոթքում, որտեղ Հիսուս սովորեցնում է Իր աշակերտներին Աստծուն ճշմարտապես աղոթելու ձևը. «Ների՛ր մեզ մեր պարտքերը, ինչպես մենք ենք ներում մեր պարտապաններին» (Մատթ. 6:12): Տերունական այս աղոթքը, կարծես, ներողամտության եռանկյուն է ստեղծում աղոթողի, Աստծու և այլ անձանց միջև: Այս եռանկյան մեջ Աստված միշտ ներում է, սակայն եթե մյուս երկու կողմերից անգամ մեկն աններողամիտ է գտնվում մյուսի նկատմամբ, ապա նրա ուղղությամբ փակվում է Աստծու ներողամտության ճանապարհը: Այս ուսուցումից պարզ է դառնում, որ քրիստոնյաները չեն կարող ակնկալել Աստծո գթությունը, եթե առաջին հերթին իրե՛նք պատրաստ չեն ներելու իրենց ցավ պատճառողներին:

Հիսուս Իր առաքելության ողջ ընթացքում մարմնավորեց աստվածային ներման ընկալումը, և դա ամենազորեղ կերպով արտահայտվեց հատկապես խաչելության ժամանակ Իր վերջին խոսքերում: Աննկարագրելի ցավի և տանջանքի մեջ Հիսուս աղոթում է Իրեն խաչ բարձրացնողների համար՝ ասելով. «Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ի՞նչ են անում» (Ղուկ. 23:34): Ապշեցուցիչ այս հառաչանքն արտացոլում էր ոչ միայն Հիսուսի ողորմության խորությունը, այլև Աստծու բացառիկ սերն Իր արարածների նկատմամբ: Այսկերպ Քրիստոս դարձավ ներումի կատարյալ տիպար և հոգևոր ներգործության աղբյուր Իր հետևորդների համար՝ սովորեցնելով, որ ներումն աստվածային բարձրագույն շնորհ է, որը կարող է հաղթահարել ամեն մեղք, ցավ ու տառապանք:

Իհարկե, ներումը պարզապես աստվածաբանական հասկացություն կամ բարոյական պարտավորություն չէ, այլ փոխակերպող ուժ է, բժշկություն՝ անհատի և մարդկանց կյանքում: Ներումն Աստծուց տրված պարգև է, որն ընձեռում է հոգևոր ազատություն: Եկեղեցու սուրբ հայրերի գրություններում և ուսմունքներում ներողամտությունը հաճախ ընկալվում է որպես քրիստոնեական կյանքի կարևորագույն գործողություն, քանի որ այն օգնում է վերականգնել խաղաղությունն ու միասնությունը: Եկեղեցու մեծագույն հայրերից Սուրբ Հովհան Ոսկեբերանն ուսուցանում է, որ ներումն ազատող-արձակող առաքինություն է. «Երբ մենք ներում ենք,– բացատրում է Հայրապետը,– արձակում ենք մեզ, բայց երբ հրաժարվում ենք ներել, կապում (բանտարկում) ենք մեր սեփական հոգին»:

Սուրբ Հովհան Ոսկեբերանի խոսքով՝ չներելը շղթայում է մարդկային հոգին դառնության և վիրավորանքի բանտում՝ խոչընդոտելով հոգևոր աճը: Ներման գործողությունը, սակայն, ազատում է զայրույթի բեռից և թույլ է տալիս մարդուն զգալ այն խաղաղությունը, որն Աստծուց է գալիս: Ներելով՝ քրիստոնյան արտացոլում է Աստծո սերը և ողորմությունը, ցույց է տալիս իր անձի արարչության մեջ հիմնադրված աստվածային պատկերն ու նմանությունը:

Քրիստոնեական կյանքում ներման կարևորությունն ընդգծվում է նաև Պողոս առաքյալի նամակներում, որտեղ առաքյալը հավատացյալներին մշտապես հորդորում է ներել միմյանց՝ աստվածային ներողամտության օրինակով: ➥ էջ 4

Երբ ցնծում են միջակությունները և անհայրենիք զոյակները

«Նրանց աստվածը նրանց որովայնն է, և փառքը՝ իրենց ամոթը»

(Փիլ. Գ:19):

Հիմա տարակուսում ենք՝ ո՞նց եղավ, ո՞ւր հասանք և ո՞ւր ենք գնում… «Արցախի կորուստից հետո տեղս չեմ գտնում»,– ասում են շատերը: Գիտեմ՝ մեր ուրախությունները թունավորված են, բայց կան ուրախանալու մեծ ու փոքր առիթները բաց չթողնող էակներ՝ հայ անունով:

Ազգովին աններելի մի քանի սխալ գործեցինք, իսկ դրսերում «կրթված»-ները համբերատար քանդեցին, այսօր էլ գործում են մեր ու մեր հայրենիքի (ավելի ճիշտ՝ հայրենիքից մնացած այս մի բուռ հողի), մեր Սուրբ Եկեղեցու դեմ:

Աստվածային, համատիեզերական սերը դարձրինք սոսկ խոսք, սիրո օրենքներով ապրողներին հռչակեցինք խելագարներ: Մեր կյանքից վռնդեցինք սերը, հանդուրժեցինք թրքամոլությունը կենցաղում, պատմության մեջ ու աշխարհագրական տարածքներում: Զոհաբերեցինք մեր զավակներին, որ ազգային վերազարթոնքի ոչ մի հնարավորություն չմնա: Դավաճանեցինք ինքներս մեզ, մեր պապերից ու հայրերից ժառանգված հողին, սուրբ հավատին, դավաճանեցինք մեր եղբայրների ու որդիների թափած արյանը՝ տեր չկանգնելով հաղթանակին:

Գիրքը և հացը հայտնվեցին փողոցում՝ ոտքի տակ: Քանդեցինք հայ ընտանիքը, մեծ-փոքր հարաբերությունը, «իրավազուրկ» հայ կնոջ պաշտպանության անվան տակ սատանիզմ տարածեցինք:

Քանի՞ սերունդ ապրում ենք սփյուռքում՝ հայրենիք երգելով, բայց այնտեղ չապրելով:

Գերագնահատեցինք մշակույթի դերը՝ թիզ առ թիզ բորենուն զիջելով մեր հողը. ի՞նչ ազգային մշակույթ՝ առանց հողի…

Գավառացու չտեսությամբ նայեցինք ուրիշների՝ իբր թե ձեռքբերումներին, նմանակեցինք: Թույլ տվեցինք, որ աղանդավորները գրավեն տուն ու փողոց, ամենուր պարտադրեն իրենց ներկայությունը: Խոսեցինք ու խոսում ենք հայրենասիրությունից, բայց մեր կողքին գոյատևում են մեր հայրերի ու զավակների ազատագրած տարածքները «գրավված» հայտարարողները:

«Չկտրեցինք» ընտրություն կեղծողների ձեռքերը: Լուռ ու ներքին նախանձով հետևեցինք մեզ ու մեր երկիրը թալանողներին, նայեցինք պալատներին, փողոցում՝ աղբարկղի մեջ, հացի կտոր որոնողներին ու հայտարարեցինք, որ հանրապետություն ենք: Կյանքի բոլոր ասպարեզներում ճանապարհ տվեցինք թերուսներին, օտար լեզվով սատանիզմ ուսանածներին ու քարոզողներին:

Սուտը դարձրինք կյանքի նշանաբան, իսկ հմտորեն ստողին հրավիրեցինք ղեկավարելու, որ սովորենք տեսնել ու լռել, թե ինչպես կարելի է օրը ցերեկով թքել մարդու վրա կամ ոհմակով հարձակվել ու ծեծել: Ազգովին տրվեցինք անհայրենիք խեղկատակների կամքին ու հանդիսատեսի անվրդով հանգստությամբ՝ անտարբեր դիտում ենք նրանց բեմադրած ողբերգության հերթական արարը՝ հանուն այն ապագայի, որ իբր թե կա: Մարդասեր ենք մեր երկրի, հողի, հավատի, ապագայի հաշվին, իսկ ապագա կա միայն թուրք կոչվելուց չամաչողների համար:

Գիրքը միշտ եղել է դաստիարակության միջոց, քանի որ առանց գրքի դժվար է պատկերացնել կրթության գործը: Ի՞նչ գրքեր են հրատարակվում հիմա մեր երկրում, դրանք որևէ կապ ունե՞ն երկրիս ու մեր կյանքի հետ, թե՞ պատվերով սարքած հատորները, ինչպես ամեն ինչ, ևս դարձել են սատանիզմի քարոզի ու տարածման գործուն միջոց:

Զայրացուցիչ, բայց զարմանալի չէ անհայրենիք ու անհող զանգվածի ծրագրված գործունեությունը և՛ սփյուռքում, և՛ Հայաստան կոչվող այս մի բուռ երկրում: Այսպես կոչված քաղաքակրթված աշխարհն աննահանջ ձգտում է կասկածելի ու տարակուսելի անմտությունը ներկայացնել որպես նորարարություն, նոր հեռանկար ու փրկություն… Սրա կողքին ավելի ու ավելի զորեղ են դառնում անհավատությունն ու աստվածային շնորհները ժխտելու ճիգերը:

Հայի մարտունակ ու մարտաշունչ տեսակն է հող ու երկիր պահել դարեր շարունակ, ու փրկությունը ներսից է լինելու, ինչպես պնդում էր Հովհաննես Թումանյանը:

Մենք պիտի հեռու մնանք համաճարակի պես տարածվող սատանիզմի բոլոր դրսևորումներից՝ հասկանալով, որ այս ամենը լավի ու վատի, բարու և չարի, հոգևորի և նյութականի հարատև պայքար է:

Իսկական ազգայինը համամարդկային է, ու բացառված չէ, որ կործանման եզրին կանգնած մարդկության փրկության առաջին քայլերն սկսվեն մեզնից ու մեր հողից: Իսկական խաղաղությունն ու ժողովրդավարությունը երազանք չեն մնա, երբ մենք արժևորենք մեր ունեցածը, դադարենք մեր արժեքներն օտարի կասկածելի չափանիշներով գնահատելուց, վերադառնանք մեր կենսունակ ու դիմացկուն արմատներին:

Իմաստուն մեկն ասել է, թե ինքը կխելագարվեր մարդկանց անարդարությունից, եթե չիմանար, որ վերջին խոսքն Աստծունն է:

Աստված ամեն վայրկյան գործում է մեր մի բուռ հողի վրա…

Ես հավատում եմ:

Մարգարիտա ԽԱՉԱՏՐՅԱՆ,
Բ. գ. դ.

Ներումը՝ քրիստոնեական վարք

➥ էջ 3

Եփեսացիներին ուղղած իր նամակում առաքյալը գրում է. «Միմյանց հանդեպ քաղցր ու գթած եղեք, ներե՛ք միմյանց, ինչպես Աստված Քրիստոսի միջոցով ներեց մեզ» (Եփես. 4:32): Պողոս առաքյալի համար ներումը պարզապես հարկադրական պատվիրան չէ, այլ քրիստոնեական առաքինությունների՝ բարյացակամության, գթասրտության և խոնարհության հասնելու ճանապարհ:

Այսպիսով՝ ներումը նաև միջոց է՝ քրիստոնեական համայնքը զորացնելու, միմյանց կյանքում հաշտեցման մթնոլորտ ստեղծելու և եկեղեցական միասնությունը պահպանելու:

Եկեղեցու խորհրդակատարական կյանքում ևս կարևորված է ներելու առաքինությունը: Մեղքերի խոստովանության կարգի ժամանակ քրիստոնյաները բարձրաձայնում են իրենց գործած զանցանքները և ստանում Աստծու թողությունն ու վերստին չմեղանչելու հորդորը: Ապաշխարության այս խորհուրդի միջոցով ոչ միայն վերականգնվում է անհատի հարաբերությունն Աստծու հետ, այլև մեղավոր մարդուն հնարավորություն է տրվում վերադառնալու համայնքի գիրկը: Ապաշխարության խորհուրդը հզոր հիշեցում է, որ ներումն անձնական, անհատական, միակողմանի գործողություն չէ, այլ համայնքային, հավաքական նշանակություն ունեցող խիզախում: Ավելին՝ Սուրբ Հաղորդությանը մասնակցելուց առաջ քրիստոնյաները կոչված են միմյանց հետ հաշտության: Մատթեոսի Ավետարանում Հիսուս պատգամում է. «Եթե զոհասեղանին քո ընծան մատուցելու լինես և այնտեղ հիշես, թե եղբայրդ քո դեմ ոխ ունի, թո՛ղ քո ընծան, գնա՛, նախ հաշտվի՛ր եղբորդ հետ և ապա ե՛կ, քո ընծան մատուցի՛ր» (Մատթ. 5:23–24): Տիրոջ այս պատվերն ընդգծում է, որ ներումը նախապայման է Փրկչի Սուրբ Մարմինն ու Արյունը ճաշակելու համար: Սուրբ Հաղորդությունը, որպես Քրիստոսի հետ հաշտեցման ու միության խորհուրդ, պահանջում է, որ քրիստոնյան այս սրբությանը մոտենա անբիծ սրտով, ինքն էլ իր հերթին ների իր դեմ կատարված հանցանքները:

Եկեղեցու սուրբ հայրապետներից Բարսեղ Մեծը ներումն ընկալում է որպես քրիստոնեական միասնության հիմք: Սուրբ Հայրապետը գրում է. «Առանց ներման միություն լինել չի կարող: Որտեղ ներում կա, այնտեղ խաղաղություն ու ներդաշնակություն կա»:

Օգոստինոս Երանելին էլ իր «Խոստովանություններ»-ում անդրադառնում է ներումի բուժիչ զորությանը՝ գրելով. «Եկե՛ք ներենք միմյանց, քանի որ այդ կերպ մենք արտացոլում ենք Աստծո ողորմությունը: Ներումով մենք բժշկվում ենք, իսկ աններողամտությամբ՝ խոցոտվում»:

Այսպիսով՝ համաձայն սուրբ հայրերի՝ ներումն ընդամենը պասիվ գործողություն չէ, այլ աստվածային սիրո և ողորմության ակտիվ արտահայտություն՝ ուղղված անհատական և համայնքային կյանքի բժշկությանը: Այն Աստծո պատվերն է և պարգևը՝ բուժելու մեզ նման մեղավոր մարդկանց և այդպիսով բուժելու ինքներս մեզ: Որպես քրիստոնյաներ՝ մենք կոչված ենք ներելու, ինչպես Քրիստոս է ներում մեզ, հասկանալով, որ ներումը ոչ միայն հոգևոր ազատության ուղի է, այլև խաղաղություն բերելու միջոց՝ մեր սրտերում, համայնքներում և ամբողջ աշխարհում: Ներելով՝ մենք մասնակից ենք դառնում Աստծո փրկագործությանը, վերածվում Նրա սերն ու շնորհները տարածողների:

Կարևոր է ընդգծել նաև, որ ներումը, իր հոգևոր բովանդակությունից զատ, նաև հոգեբանական խոր գործընթաց է, որը ենթադրում է բարդ հուզական և ճանաչողական փոփոխություններ: Ժամանակակից հոգեբանությունը ներումը սահմանում է որպես վրդովմունքի, թշնամանքի, մեղանչողի նկատմամբ վրեժխնդրության ցանկության և այլ բացասական զգացմունքների հաղթահարման գիտակցված դրսևորում: Հոգեբանական տեսանկյունից ներողամտությունը ներառում է ճանաչողական քայլեր, որոնցից մեկը վերագնահատումն է: Այն թույլ է տալիս ցավալի իրադարձությունն ընկալել այնպես, որ նվազեցվի դրա հուզական ազդեցությունը: Օրինակ՝ մարդը կարող է հասկանալ, որ իրեն վիրավորած անձը գործել է անտեղյակության կամ անձնական ցավի ազդեցության պատճառով: Այլոց կողմից մեր հանդեպ գործված սխալների վերաիմաստավորման այս ձևը կարող է օգնել՝ նվազեցնելու հոգում կուտակված զայրույթը, մտնելու այլ անձանց դրության մեջ և, ի վերջո, գիտակցորեն ներելու մարդկանց:



Ադամ դե Կոստեր. Սուրբ Պետրոսի ուրացումը, 1650 թ.

Ներման մեկ այլ կարևոր գործոն է զգացմունքային կարգավորումը կամ հույզերի կառավարումը: Մարդիկ, որոնք կարող են կառավարել իրենց զայրույթը, վիշտը կամ այլ զգացմունքներ, շատ ավելի սահուն են ազատվում վիրավորանքների բեռից: Ուսումնասիրությունները փաստում են, որ ներողամտությունը կապված է հուզական ինտելեկտի, այսինքն՝ սեփական հուզական վիճակներն ընկալելու, հասկանալու և կառավարելու ունակության հետ: Ավելի բարձր հուզական ինտելեկտ ունեցող անհատները հակված են ներելու թե ուրիշներին, թե իրենց: Ներողամտությունը նաև ուժգնացնում է կարեկցանքի զգացողությունը, որը, ըստ էության, սոցիալական վարքագծի անկյունաքարն է: Մեղավորի հուզական աշխարհի ճանաչումն ու ապրումակցումը կամուրջ են ստեղծում՝ կարեկցանքի ուժով հաղթահարելու իրեն պատճառված ցավը և ներելու իր դեմ մեղանչողին:

Նշյալ գործիքները կարևոր են կյանքում՝ ներման ամբողջական խորությունն ընկալելու համար, որովհետև տեսականորեն հրաշալի է հնչում Տերունական աղոթքի խնդրանքը՝ «Ների՛ր մեզ մեր պարտքերը, ինչպես մենք ենք ներում մեր պարտապաններին» (Մատթ. 6:12), սակայն գործնականում որքա՞ն դեպքեր են լինում, երբ մենք հրաժարվում ենք մեր հանդեպ անիրավություն գործած անձանց ներելուց՝ պատճառաբանելով կատարված հանցանքի մեծությունը: Ահա թե ինչո՞ւ են հարկավոր նաև հոգեբանական գիտելիքները՝ ներման գործընթացը լիարժեքորեն իրականացնելու համար: Հոգեբանները նաև փաստում են, որ ներողամտությունը հանգեցնում է ընկճվածության հաղթահարման, հուզական կայունության հաստատման և նույնիսկ կյանքի իմաստի ու նպատակի ամրապնդման:

Ներողամտությունը, սակայն, բազմաբարդ գործընթաց է: Անձի թե՛ հոգևոր, թե՛ հոգեբանական առողջության համար անհրաժեշտ է, որ ներումը լինի իրական և գիտակցված: Շատ արագ ներելը՝ հատկապես հոգևոր պատվիրանների բարոյական ճնշման ներքո, հնարավոր է պատճառ դառնալ չհասկացված հույզերի կուտակումների, որոնք էլ հետագայում կարող են դրսևորվել հոգեբանական ծանր տառապանքների տեսքով: Ուստի, կապված պատճառված ցավի աստիճանից և բնույթից, ներումը երբեմն կարող է տարբեր կերպով դրսևորվել: Օրինակ՝ բռնության կամ ծանր հանցանքների դեպքում ներումը կարող է նույնիսկ երկար սպասել տալ, այն անգամ կարող է երբեք էլ լիարժեքորեն տեղի չունենալ, սակայն նման իրավիճակներում հոգեբանները խորհուրդ են տալիս տառապողին ավելի շատ կենտրոնանալ անձնական սահմաններ հաստատելու և անձնական խաղաղության ուղիներ փնտրելու վրա, որոնք էլ իրենց հերթին տուժող անձի մեջ աստիճանաբար կզարգացնեն ներողամտության ճշմարիտ զգացողություն և ապրում:

Որպես ամփոփում՝ հարկ է վերստին նշել, որ ներողամտությունը քրիստոնեական կյանքի մեծագույն պատվիրան է, որի մասին պետք է մշտապես մտածել, պատրաստել մեզ տարբեր իրավիճակներում, ըստ անհրաժեշտության, համբերատարություն և ներողամտություն հանդես բերելու, հիշելու, որ ներել նշանակում է ներվել, իսկ ներվել նշանակում է մաքրվել մեղքերից: Ներումի միջոցով քրիստոնյաներիս կյանքը դառնում է հաշտեցման կյանք, մեր անձերը բժշկվում են, մեր հարաբերությունները՝ վերափոխվում: Ներման մեջ պետք է բացառենք հաշվենկատությունը, չհաստատենք թվեր, չափ ու սահմաններ, այլ ներենք անսահմանորեն, «քանզի ում շատ է ներվում, շատ է սիրում» (Ղուկ. 7:47): Ուստի, ներենք, որովհետև Աստված ներում է մեզ ամեն քայլափոխի:

Արման սրկ. ԲՈՒՆԱՐՋՅԱՆ
Արմինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հոգեգալուստ

Հարցազրույց Վազգեն աբեղա Կարապետյանի հետ

— Հայր սուրբ, Հոգեգալուստը՝ որպես Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տերունական տոն, ինչ նախապատմություն և խորհրդաբանություն ունի:

— Սուրբ Հոգու էջքը՝ Հոգեգալուստը, քրիստոնեական Եկեղեցու կարևորագույն տոներից է: Իհարկե, ինչ-ինչ պատճառներով Հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոների շարքին չի դասվում, բայց իր կարևորությամբ փրկագործության պատմության նշանավոր իրադարձություններից է: Նախքան Սուրբ Հոգու գալստյան նորկտակարանյան պատմությունը Հին Կտակարանում արդեն մի քանի իրադարձություններ կային, որոնք ևս ուրվագծային կերպով պատմում էին Սուրբ Հոգու մասին: Օրինակ՝ Մովսեսի՝ Սինա լեռան վրա աստվածային հայտնությունն օրենքի՝ տասը պատվիրանների միջոցով, կամ առավել հետ գնանք. բաբելոնյան աշտարակաշինության ժամանակ, երբ բոլորի լեզուները խառնվեցին, և իրար չէին հասկանում, ինչպես Նոր Կտակարանում Հոգեգալուստի ժամանակ: Ըստ այդ իրադարձության՝ Պենտեկոստեին՝ Հիսուս Քրիստոսի Հարության հիսուներորդ օրը, Վերնատանը Սուրբ Հոգին իջավ առաքյալների վրա, և նրանք սկսեցին խոսել տարբեր լեզուներով, որոնք մինչ այդ չգիտեին: Եվ այս պատմության ամբողջ գեղեցկությունը հենց լեզվախոսության հրաշքի մեջ է: Ղուկասը հստակ ասում է, որ առաքյալներն սկսում են խոսել տարբեր լեզուներով, և թվարկում է դրանք: Մարդիկ ընդհուպ մտածում են, որ առաքյալները խմիչքից արբել են, ինչին հաջորդում է Պետրոս առաքյալի բոցաշունչ ճառը, որը երեք հազար հոգու ապաշխարության պատճառ դարձավ:

Հոգեգալուստը մեզ համար առանցքային նշանակություն ունի: Պետք է հասկանանք, որ մոտ երկու հազար տարի առաջ տեղի ունեցած հենց այս իրադարձության արդյունքում հիմնադրվեց քրիստոնեական Սուրբ Եկեղեցին, և կատարվեց Քրիստոսի խոստումը. «Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին Հայրը կուղարկի Իմ անունով, Նա ձեզ ամեն բան կուսուցանի և կհիշեցնի այն ամենը, ինչ Ես ասացի ձեզ» (Հովհ. 14:26): Այսպիսով՝ առաքյալներն ստանում են Սուրբ Հոգու շնորհները և սկսում քարոզչությունն ամբողջ աշխարհում:

— Իսկ ինչո՞ւ է տոնը համարվում ազատարար և պարգևիչ:

— Ինչպես նշեցինք, Վերնատանն առաքյալներն ստացան Սուրբ Հոգին՝ որպես ազատիչ ցանկացած երկյուղից և տագնապից: Բնականաբար, Քրիստոսի խաչելությունն ու հարությունն արդեն իսկ բավարար էին անկասկած հավատքի և «գնալ քարոզելու» (Մատթ. 28:19) համար, սակայն առաքյալներին անհրաժեշտ էր նաև խիզախություն՝ հեթանոսներին դեմ դուրս գալու: Հոգեգալուստն ազատեց նրանց վախի հնարավոր բոլոր կապանքներից և համարձակություն տվեց քարոզելու և նահատակվելու: Այսպիսով՝ Հոգեգալուստն առաքյալներին ազատում է մահվան վախից և պարգևում շնորհներ, ինչպես, օրինակ, ուրիշ լեզվով խոսելը:

— Սուրբ Հոգու հրաշափառ երևանվելն Աստվածաշնչում ինչպե՞ս է պատկերված: Սուրբ Հոգու ի՞նչ գործուն դրսևորումներ կան Նոր Կտակարանում:

— Աստվածաշնչում Սուրբ Հոգու հայտնության ամենակարևոր դեպքի մասին արդեն խոսեցինք, բայց, դրանից զատ, կարևոր մի քանի դրվագ էլ կա: Նախ՝ Մարիամի որովայնում Հիսուսի մարդկային բնության սկզբնավորումը՝ հղացումը: Ըստ Աստվածաշնչի՝ Սուրբ Հոգին խորհրդավոր կերպով ձևավորում է մարդեղենացած Որդուն՝ առանց ամուսնական հարաբերության: Կամ ավետարանիչը գրում է, որ Քրիստոսի մկրտության ժամանակ՝ ջրից դուրս գալուց անմիջապես հետո, երկինքը բացվում է, և Աստծո Հոգին, ինչպես աղավնի, իջնում է Նրա վրա (Մատթ. 3:16):

Գիտենք, որ նախքան քարոզչության սկիզբը քառասուն օր անապատում անցկացրեց, փորձությունների ենթարկվեց, և ինչպես Ղուկաս ավետարանիչն է ասում. «Հոգով առաջնորդվեց անապատ» (Ղուկ. 4:1): Այս ամենից բացի՝ Նոր Կտակարանում Սուրբ Հոգին ներկայանում է նաև այլ կերպ՝ զորացնող, առաջնորդող և աստվածային ներկայությունը հայտնող: Քարոզչության ընթացքում Քրիստոս խոսում է դեպի ճշմարտություն առաջնորդող մխիթարիչ Սուրբ Հոգու մասին: Առաքելական նամակները ևս հարուստ են Սուրբ Հոգու առաջնորդության մասին պատմող զանազան դեպքերով: Օրինակ՝ առաքելական քարոզչության ժամանակ Սուրբ Հոգին կարող էր արգելել որևէ քաղաք մտնել կամ չմտնել (Գործք 16:6):

— Սուրբ Հոգին՝ որպես Սուրբ Երրորդության անտրոհելի Անձ, միաժամանակ բնորոշվում է առանձնահատկություններով: Որպես էություն՝ ինչպե՞ս է ներկայացվում Սուրբ Հոգին դավանաբանական գրականության մեջ: Հայտնի է, որ հիմնական հատկություններից մեկն անորսալիությունն է, որպես հուր, շունչ կամ օդ դրսևորվելը: Կբացահայտե՞ք դավանաբանական ամբողջական պատկերը:

— Հայ Եկեղեցին դավանում է Սուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Խոսքը երեք Անձի, բայց աստվածային մեկ բնության մասին է: Կարևոր է գիտակցել, որ Սուրբ Երրորդության գաղափարն ամբողջությամբ իմանալ կամ ընկալել անհնար է: Այս երեք Անձն ունի աստվածային մեկ և նույն բնությունը, երեքն էլ հավասար են փառքով և իրար չեն խառնվում կամ բաժանվում: Անձերից Սուրբ Հոգին, ըստ Հայ Եկեղեցու դավանաբանության, բխում է Հորից Որդու միջոցով: Միևնույն ժամանակ Սուրբ Հոգին ունի Իր Անձին բնորոշ, եզակի հատկություններ:

Սուրբ Հոգին անստեղծ, ժամանակից դուրս՝ հավիտենական, սկիզբ չունեցող, ինքնուրույն, բայց ոչ անկախ գոյություն է: Շատ հաճախ ներկայացվում է խորհրդանիշներով՝ Նրա ներգործությունը բացահայտելու նպատակով: Նրան ներկայացնում են որպես շունչ կամ քամի, քանի որ հնարավոր չէ որսալ. շոյում է, զգացվում, բայց բռնել-սահմանափակել անհնար է: Երբեմն բնութագրվում է որպես հուր-կրակ՝ մաքրագործող, լուսավորող, բոցավառող: Սրա լավագույն օրինակը հենց Հոգեգալուստի դրվագն է: Կարևոր խորհրդանիշներից է ջուրը՝ որպես մաքրագործող և կենսատու աղբյուր: Ի տարբերություն Հոր և Որդու՝ Սուրբ Հոգին մշտապես ընկալվել է եթերային կերպով: Մեր հայրերը, մատենագիրները երբեք չեն կարողացել մարմնավոր կերպարանքով պատկերացնել Սուրբ Հոգուն, ինչպես Քրիստոսին կամ Հորը, Որը, Հին Ուխտի մարդու ընկալումով, հայտնվում էր Սինա լեռան վրա և այլն: Այն մշտապես ընկալվել է խորհրդանիշներով:

Սուրբ Հոգու դավանաբանական ճշգրիտ պատկերն ունենալու համար պետք է հիշենք մեր Եկեղեցու հավատամքը՝ մասնավորապես Սուրբ Հոգուն առնչվող հատվածը. «Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն՝ անեղին և կատարյալին, որ խոսեց օրենքի և մարգարեների և Ավետարանների միջոցով: Որն իջավ Հորդանանի վրա, քարոզեց առաքյալների միջոցով և բնակվեց սրբերի մեջ»:

— Սուրբ Հոգին հայտնի է նաև իր յոթնարփյա շնորհներով, որոնք բաշխվեցին առաքյալներին: Որո՞նք են այդ շնորհները, և հասարակ մահկանացուներին հասանելի՞ են դրանք արդյոք:

— Սուրբ Հոգին շնորհաբաշխ է: Ինչպես առաքյալները Հոգեգալստին, մարգարեները մարգարեանալու ժամանակ, ավետարանիչները շարադրելիս ստացան շնորհներ, այնպես էլ հավատացյալը մյուռոնով դրոշմվելիս ստանում է դրանք:

Հոգեգալուստը Սուրբ Զատկից յոթ շաբաթ հետո է և նշվում է յոթ օր: Այս գեղեցիկ ընթացքը կոչվում է յոթնարփյա շնորհների ընթացք: Վերնատանը, ինչպես ասացինք,

առաքյալներն ստացան յոթ կարևորագույն շնորհները՝ իմաստություն, գիտություն, զորություն, հանճար, խորհուրդ, աստվածապաշտություն և երկյուղ: Սրանք միանգամայն սահմանափակ շնորհների շարք չեն: Աստված Ինքն է որոշում՝ ինչպիսի շնորհներով զարդարի Իր հավատացյալին: Օրինակ՝ Պողոս առաքյալը, խոսելով Սուրբ Հոգու պտուղների մասին, թվարկում է դրանք՝ սերը, խնդությունը, խաղաղությունը, համբերությունը, քաղցրությունը, բարությունը, հավատարմությունը, հեզությունը, ժուժկալությունը (Գաղատ. 5:22–23): Անքննելիորեն, սրանք բոլորը յուրաքանչյուր հավատացյալի հոգու փրկության համար են, ուստի հասանելի են բոլորին:

— Ժամանակակից մարդու մեջ որքանո՞վ են այսօր ներկա Սուրբ Հոգին և Նրա շնորհները:

— Նախ՝ Հոգեգալուստով Սուրբ Հոգին հավիտենապես ներկա է Սուրբ Եկեղեցում: Սուրբ Հոգին ժամանակին և փոփոխմանը ենթակա չէ, հետևաբար մշտապես նույնն է և այսօր էլ իրական, կենդանի ու ներգործող է Եկեղեցում: Նա է առաջնորդում, սրբագործում, մխիթարում և շնորհներ պարգևում յուրաքանչյուրին: Սուրբ Հոգին ներկա է ցանկացած մկրտված և մյուռոնով դրոշմված հավատացյալի մեջ:

Բնականաբար, ինչպես ասացինք, Աստված ժամանակից կախված չէ և չի փոփոխվում, նույնպես և մարդու հոգու կարիքները, որքան էլ փոխվի մարդկային աշխարհայացքը, միևնույն է, մնում են անփոփոխ: Հետևաբար անկախ նրանից՝ մարդը մի քանի հարյուր տարի առաջ է ապրում, թե՞ հիմա, Սուրբ Հոգին հավասարապես գործում է, և Նրա մխիթարության կարիքը, անկասկած, զգացվում է ցանկացածի հոգում: Սակայն Սուրբ Հոգու շնորհները հեղվում են բացառապես անձի փրկության և մարդկության փրկագործության իրականացման համար՝ երկու կողմի ցանկությամբ: Օրինակ՝ հոգեգալստյան առավոտը, երբ հրե լեզուներն իջան առաքյալների վրա, և նրանք սկսեցին խոսել տարբեր լեզուներով, նպատակ ուներ Քրիստոսի վարդապետության քարոզչությունը կազմակերպել հեթանոսների շրջանակներում: Առաքյալները դուրս եկան Իսրայելի տարածքից և լծվեցին այլալեզու հեթանոսների քարոզչությանը: Այսօր Սուրբ Հոգին «կարիք չունի» մարդկանց լեզուներ տալու, քանի որ աշխարհի բոլոր լեզուներով քարոզիչներ կան, կամ Աստվածաշունչն աշխարհի ամենաշատ լեզուներով թարգմանված գիրքն է: Այսինքն՝ մարդիկ, որոնք իբրև թե սկսում են խոսել լեզուներով՝ այն էլ գոյություն չունեցող, Սուրբ Հոգու աստվածային տրամաբանությունից դուրս են: Հետևաբար՝ այսօրվա մարդը նույնպես ստանում է Սուրբ Հոգուց պարգևներ և շնորհներ՝ կախված այն բանից, թե ինչպես է դրանք գործածում իր կյանքում:

— Հոգեգալստյան և մարդեղենացման կամ մարդեղենացման և Հոգեգալուստի փոխկապակցվածությունը կմեկնաբանե՞ք:

— Քրիստոնեական փրկագործության վարդապետության մեջ Հոգեգալուստն ու մարդեղենացումը խորապես փոխկապակցված իրողություններ են: Մարդեղացման սկիզբն այն պահն է, երբ Որդին՝ Բանը, անընկալելի կերպով Աստվածածնի արգանդում մարմին է առնում՝ դառնալով կատարյալ մարդ: Աստվածաշունչը հստակ ասում է, որ մարդեղացումը տեղի է ունենում Սուրբ Հոգով (Մատթ. 1:18): Իրականում սրանք մեր տկար մտքի համար ոչ լիարժեք ընկալելի եղելություններ են: Մենք միայն հավատքի աչքերով կարող ենք նայել և վստահել, որ Աստծո Բանը՝ Աստված, կատարյալ մարդ դարձավ, մեր մեջ բնակվեց՝ Իր աստվածային բնությանը միավորելով ողջ մարդկային բնությունը, և սրբեց մեղքից: Իսկ հարությունից և համբարձումից հետո Սուրբ Հոգին եկավ աշխարհ՝ մարդկանց փրկության՝ Աստծո ծրագիրը շարունակելու համար: Հետևաբար՝ մարդեղացումն առանց հոգեգալստի ոչ ամբողջական կլիներ կամ կմնար որպես պատմական իրադարձություն: Միևնույն ժամանակ հոգեգալուստը տեղի ունեցավ միայն մարդեղացման միջոցով, քանի որ Սուրբ Հոգին իջավ Քրիստոսի հիմնած Եկեղեցու վրա: Հետաքրքիր ձևակերպում կա, որ մարդեղացումը Աստծո մոտենալն էր մարդուն, իսկ հոգեգալուստը՝ Աստծո բնակվելը մարդու մեջ: Այսպիսով՝ դրանք միևնույն փրկագործական ծրագրի երկու անբաժանելի իրադարձությունն են:

— Նոր Կտակարանի համաձայն՝ Հիսուս հարություն առավ, համբարձվեց երկինք ու նստեց Աստծու աջ կողմում, որ երկրորդ անգամ գա երկիր՝ կատարելու մեսիական մարգարեությունները: Որո՞նք են դրանք:

— Դա մարդկության կարևորագույն հարցերից է: Մեսիայի մասին մարգարեությունների զգալի մասն արդեն կատարվել է Հիսուսի մարդեղացմամբ: Եվ շուրջ երկու հազարամյակ ողջ քրիստոնյա աշխարհն սպասում է Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստյանը, որը պիտի լինի աշխարհի վերջին իրադարձությունը: Ըստ Նոր Կտակարանի՝ Քրիստոս պետք է վերադառնա՝ ողջերին և մեռածներին դատելու համար, որից հետո արդարները հավիտենության մեջ փառավորելու են Աստծուն:

Բնականաբար, նման մարգարեությունների ամբողջական պատկերացումը շատ դժվար է: Ինչպես հրեաները հարյուրավոր տարիներ լսում էին Մեսիայի մասին, բայց երբ եկավ, չճանաչեցին, այդպես էլ քրիստոնյաներս, մինչև չլինեն այս իրադարձությունները, ճշգրիտ պատկերացնել չենք կարող:

Այսպիսով՝ Որդին աստվածային փառքով գալու է երկիր այնպես, որ բոլորն իմանան. մեռելները հարություն են առնելու, լինելու է ընդհանրական դատաստան, և չարը վերջնականապես պարտվելու է: Այս ամենից հետո հաստատվելու է Աստծո հավիտենական և անժամանակ թագավորությունը, որտեղ լինելու հույսով էլ բոլորս ապրում ենք:

— Շնորհակալություն հարցազրույցի համար, հայր Վազգեն:

— Ես եմ շնորհակալ այս հոգեշահ զրույցի համար: Սուրբ Հոգու շնորհները թող առատապես հեղվեն և զորացնեն մեզ բոլորիս:

Հարցազրույցը՝ Մեղրի ՂՈՒԿԱՍՅԱՆԻ

Կյանքի խոհափիլիսոփայությունը «Ժողովող» գրքում

Աստվածաշնչի «Քերթողական-ուսուցողական» շարքի իմաստութենական գրքերից մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Ժողովող» գիրքը: Գրական-գեղարվեստական հարուստ ոճով գրված եբրայերեն այս գիրքն Աստվածաշնչի կանոնականացումից ի վեր («Ժողովող»-ը, նաև ՀԿ-ի մյուս գրքերը, ավարտուն տեսքի են բերվել և Սուրբ Գրքի կանոնում հաստատագրվել Ք. հ. 90 թ. Յամնիայի ժողովով) սուրբգրային բանասիրության և աստվածաշնչագիտության մեջ եղել է ամենից շատ քննարկված և ուսումնասիրված սրբաշունչ գրքերից մեկը: Համաձայն ռաբինական ավանդության՝ այն գրել է Սողոմոն թագավորը (թագավորել է մոտ Ք. ա. 970–931 թթ.) իր ծերության ժամանակ, սակայն պարսկական փոխառությունների և արամեաբանությունների առկայությունը մատնանշում է Ք. ա. մոտ 450-ից ոչ շուտ գրված լինելը. այսօր գիտական գրականության մեջ գրքի կազմման վերջին հնարավոր տարեթիվ է համարվում Ք. ա. 180 թվականը:

Ինչպես Սողոմոն Իմաստուն թագավորին վերագրված մյուս գրքերը («Առակաց», «Երգ երգոց», «Իմաստություն Սողոմոնի»), «Ժողովողը» ևս հարուստ է առակներով: Այստեղ «առակներ» ասելով՝ չպետք է պատկերացնել հայ բանահյուսության գրական նույնանուն ժանրին հատուկ կառուցվածքն ու բնութագրիչները, քանի որ մենք գործ ունենք եբրայական գրական սեռի հետ, որը կոչվում է «մաշալ» («առակ»): Մաշալները համապատասխանում են մեր առած-ասացվածքներին, քանի որ բուն առակը (գրբ.՝ «առ ակն»՝ «աչքի առաջ») բարոյախոսական բնույթի այլաբանական գրական ստեղծագործություն է՝ բաղկացած դիպաշարից և բարոյախոսությունից: Հետևաբար՝ ի սկզբանե առանձնանշենք, որ հայերեն բառի բացատրությունը հունական լեզվամտածողության շրջանակում է (հուն.՝ «պառոիմիա»), և եբրայական գրվածքներում հանդիպող համապատասխան անվամբ հատվածները զուտ այդպես են անվանվում՝ ելնելով եբրայական բանահյուսական ու իմաստասիրական մտածողության մեջ դրանց ընկալումից: Իսկ առած-ասացվածքները, որոնց համապատասխանում են եբրայական մաշալները, ժողովրդական բանահյուսության ամենատարածված տեսակներից են՝ կազմված այլաբանական բնույթի մեկ կամ երկու նախադասությունից, երբեմն՝ մի քանի բառերից, որոնց հատուկ են խոսքի պարզությունը, պատկերավորությունը, բնութագրումների դիպուկությունը:

Այսպես՝ «Ժողովող» գրքում առկա առակներն ու ասացվածքներն իրենց բովանդակությամբ տարբերվում են Սողոմոնին վերագրվող մյուս գործերից: Օրինակ՝ «Առակաց» գրքում առակները հուսադրող և մխիթարական են: Ըստ դրանց՝ նրանք, ովքեր հետամուտ են իմաստությանը, կհասնեն դրան և իմաստության հետ մարդու կյանքը կլցնեն հարստությունն ու զորությունը և բոլոր տեսակի այլ օրհնություններ: Գիրքը խրատում է, որ խարդախությամբ ձեռք բերված հարստությունը չի հարատևի, բայց նա, ով զգույշ և արդարացիորեն հարստության հետևից է գնում, կհաջողի: Նրանք, ովքեր վախենում են Աստծուց և պահում են Նրա պատվիրանները, կյանք կգտնեն: Աշխարհում կա բարոյական կարգ, պատճառի և հետևանքի միջև կա ճանաչելի կապ: Աստված վերահսկում է ամեն ինչ, որ արդարության և իրավունքի նժարը չշեղվի: Գրեթե յուրաքանչյուր էջում «Առակաց» գրքի իմաստությունները մոռանալ չեն տալիս, որ նրանք, ովքեր բարիք են գործում, հաջողության են հասնում և բարգավաճում, իսկ ովքեր չարիք են գործում, ձախողվում են: Աստվածաբանական օրինաչափ մտքերը բնորոշում են այս գրքի ուսմունքը: Բերենք «Առակաց» գրքից համապատասխան մեջբերումներ.

• Ողորմած մարդը բարիք է գործում իր հոգուն, իսկ անողորմը կործանում է իր մարմինը (11:17):

• Իմաստուն կանայք կառուցում են իրենց տները, իսկ անզգամները՝ կործանում իրենց ձեռքերով (14:1):

• Չարի աչքերը ամեն ժամ սպասում են չարիքների, իսկ բարիները պիտի հանդարտվեն ամեն ժամ (15:15):

• Պատվիրաններ պահողը պահում է իր հոգին, իսկ նա, ով արհամարհում է իր ճանապարհը, պիտի կործանվի (19:16):

• Իմաստունը լավ է հզորից, և հանճարեղը՝ մեծամեծ դաստակերտներ ունեցողից (24:5):

• Լավ է հանդիմանող մարդը, քան համառողը, քանզի եթե կրակը սրան շեշտակի հարվածի, բուժում չի լինի (29:1):

Ժողովողի առակներն ընթերցելով՝ տեսնում ենք, որ, ըստ հեղինակի, բարոյական կարգ չկա, և իմաստությունը ոչինչ է. «Ունայնություն ունայնությանց,– ասաց Ժողովողը,– ունայնություն ունայնությանց. ամեն ինչ ունայն է» (1:2): Սողոմոնը հետամուտ էր իմաստությանը, բայց հասկացավ, որ այն «քամու հետապնդում» է, քանի որ «շատ իմաստության մեջ շատ գիտություն կա, և իր գիտությունն ավելացնողն իր ցավն է ավելացնում» (1:18): Իմաստունը կարող է տեսնել այնպիսի բաներ, որոնք հիմարը չի կարող անգամ կանխատեսել, բայց երկուսն էլ դատապարտված են մահվան (2:14), և այդ հանգուցալուծման կենսադաշտում իմաստության ձգտումը դառնում է անիմաստ (2:15): Մահվանից հետո չեն հիշվում նաև ո՛չ իմաստունը, ո՛չ հիմարը (2:16): Մահվան իրականության առջև հավասարազոր են անգամ մարդն ու գազանը (3:19): Աշխարհում բացակայում է արդարությունը. անօգ ճնշվածները թողնված են միայնակ ու անմխիթար:

Աշխարհը, որը Սողոմոնը նկարագրում է «Ժողովող» գրքում, կարծես կենսատարածք է՝ առանց Աստծո, առանց ակնհայտ արդարության, առանց կայունության: Աստված հիշատակվում է ամբողջ գրքում, բայց սա այնքան անհամատեղելի է թվում գրքի մնացած մասի ակնհայտ տարամիտվածության հետ, որ հետևյալ ձևակերպմամբ հնչում է որպես փիլիսոփայական ուղերձ և կյանքի ընկալման շարժառիթ. «Մարդուս համար ուտելուց, խմելուց և սեփական վաստակով ինքն իրեն հաճույք պատճառելուց ավելի լավ բան չկա» (2:24): Պարբերաբար հնչող այս և նման հորդորները տեղիք են տվել ոմանց՝ գիրքը բնորոշելու հեդոնիստական (հեդոնիզմը կյանքի գերագույն նպատակ է սահմանում հաճույքը): Որոշ ուսումնասիրողներ գրքի գաղափարական ակունքները գտնում են էպիկուրիզմի հեթանոսական ձևակերպումներում կամ հեդոնիստական նիհիլիզմի տեսության մեջ:

Իրականում, սակայն, չկա հակասություն ասացվածքների և գրքի մյուս հատվածների միջև: Առակները շատ ավելի բարդ են, քան մենք հաճախ գիտակցում ենք: Դրանցում չի ասվում, որ իմաստության և բարգավաճման, արդարության եւ հաջողության միջև կա միակողմանի հարաբերություն: Դրանք չեն գրվել Հոբի ճառախոս ընկերների կողմից: Ժողովողի գրքի խոհական մտքերը համատեքստային ընդգրկմամբ լիարժեք ըմբռնելու և բացատրելու համար անհրաժեշտ է անդրադառնալ որոշ բանալի բառերի իմաստային դաշտի լեզվաքննությանը:

Այսպես՝ եբրայերենում «ունայնություն» բառը (הבל- հեվէլ) նշանակում է նաև «գոլորշի» (Առակ. 21: 6) կամ «շունչ» (Հոբ 7:16, Սաղմ. 39:5, 11, 62: 9, 62: 9, 94:11, 144:4, Ես. 57:13): Եբրայերեն բառը նշանակում է շնչառության ժամանակ անփութորեն արտաշնչվող գոլորշի, որն անտեսանելի է՝ բացառությամբ ձմռան ցուրտ օրերի, և ամեն դեպքում անմիջապես հօդս է ցնդում: Այն գաղափարը, թե այսաշխարհային կյանքը գոլորշի է, կարմիր թելի նման անցնում է Աստվածաշնչի ուսուցողական գրքերում.

Հարստությունը կարող է գոլորշի լինել, ինչպես ասում է «Առակաց»-ը. «Ով լեզվի ստությամբ գանձ է կուտակում, սնոտի բաների հետևից է գնում և մահվան որոգայթներին պիտի հասնի» (հմմտ. գրաբար՝ «Գանձ ստութեամբ լեզուի է՝ ունայնութիւն վայրապար. որ խնդրէնն՝ խնդրեն զմահ») (21:6): Եթե անազնիվ կերպով հարստություն է գանձվում, դա թռիչքային գոլորշու պես է և ենթակա է անհետացման, իսկ գանձողն էլ՝ մահվան:

Կյանքի օրերը գոլորշի են. «Քանի որ հավիտյան չեմ ապրի, թող որ ես համբերող միշտ լինեմ: Հեռու կաց ինձնից, քանի որ իզուր է կյանքը իմ» (հմմտ. գրաբար՝ «թափես զոգի յանձնէ իմմէ, եւ ի մարմնոյ զշունչ իմ, եւ ի մահուանէ զկեանս իմ» (Հոբ 7:16): Հոբի գրքում ևս շեշտը դրվում է իրերի անկատարության վրա: ➥ էջ 7

Ողորմածությունը պետք է դառնա ընթացք

Երբ մեկը ձեռք է մեկնում աղքատին ողորմություն տալու համար, փրկում է իր անձը մահվանից և նմանվում է Աստծուն ու իր գանձերն է կուտակում Երկնքում, որտեղ ո՛չ ցեցն ու ուտիճն են ապականում, և ո՛չ էլ գողերն են գողանում: Եվ ով ողորմում է աղքատին ու տնանկին, նրան չար օրվանից փրկում է Տերը և թույլ է տալիս, որ օրհնյալ լինի նրա ողջ վաստակը: Չէ՞ որ այսպես է ասում Քրիստոս. «Ողորմություն եմ կամենում և ոչ թե զոհ». դու ողորմությամբ ինձ պտուղ տվեցիր, և ես պիտի մաքրեմ քեզ քո մեղքերից: Քո ձեռքը մեկնեցիր երկրի վրա ապրող աղքատին ու այդպիսով մերձավոր դարձար Աստծուն, ողորմելով տնանկին՝ փոխ տվեցիր Աստծուն՝ երկնքում

(Սուրբ Հովհան Ոսկեբերան):

Երեք կարևոր հանգամանք կա մարդու համար՝ մեղքերից մաքրվելու և հավիտենական կյանքին հասնելու համար: Առաջինն աղոթքն է, ապա՝ պահքն ու ողորմածությունը: Աստվածախոս Ավետարանում գրված է. «Երանի ողորմածներին, որովհետև նրանք պիտի ողորմություն գտնեն» (Մատթ. 5:7): Ողորմությունը դրախտից արտաքսված մարդուն բարձրացնում է՝ մերձեցնելով հավիտենական կյանքին: Բայց միայն ողորմություն տալը բավական չէ. մարդը նյութական ունեցվածքի հետ նաև իր սիրտը, հոգին ու կամքը պետք է մատուցի, քանի որ ողորմությունն այնժամ է ընդունելի, երբ ի սրտե է բաշխվում: Աստծո համար ողորմությունն ընդունելի չէ, երբ ձեռքը տալիս է, իսկ սիրտը՝ ափսոսում. «Աստված սիրում է զվարթառատ տուրքը» (Բ Կորնթ. 9:7):

Գթությունը չափվում է գործողի իղձով ու կարողությամբ: Եթե մեկը հարուստ չէ՝ կարոտյալների տուրքը լիաձեռն մատուցելու, թող այնքան տա, որքան կարող է: Տեր Հիսուս ասաց. «Ով այս փոքրիկներից մեկին միայն մի բաժակ սառը ջուր կտա խմելու՝ իբրև աշակերտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, իր վարձը չպիտի կորցնի» (Մատթ. 10:42): Մեկ ուրիշ անգամ էլ Տերը խրատում է երկրի վրա գանձեր չդիզել, այլ՝ «Վաճառեցեք ձեր ինչքերը և ողորմություն տվեք. ձեզ համար շինեցեք չհնացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ոչ գողն է մոտենում, և ոչ ցեցը՝ փչացնում. որովհետև ուր որ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Ղուկ. 12: 33–34):

Չարիքների ճանապարհին անզգջում մարդիկ թող չհուսան փրկության հասնել լոկ գթասրտությամբ ու տուրքերով, քանի որ ողորմության արդյունքի վրա հույս դնելով՝ առանց խղճի խայթի մեղանչելու կամ մեղքերից հետ չդառնալու դեպքում ողորմությունը կորցնում է իր նշանակությունն ու իմաստը: Այսպիսով՝ կարոտյալներին ողորմություն տալ, բայց երբեք զանց չառնել կատարյալ զղջումն ու խոստովանությունը, աղոթքն ու պահեցողությունը, կամ հակառակը՝ քրիստոնեական չեն. «Բարի են աղոթքները՝ պահեցողություններով, ողորմություններով և արդարություններով» (Տոբիթ 12:8):

Տերը պատվիրում է. «Ողորմություն տվեք, և ահա ձեր ամեն ինչը մաքուր կլինի» (Ղուկ. 11:41): Բազում մեղավորներ աղքատներին ու Աստծո տան սպասավորներին տված ողորմությունների շնորհիվ արժանացան աստվածային գթասրտության ու շնորհների՝ մեղքերից մաքրվելով և արդարանալով: Շատերն էլ, ողորմություն բաշխելով, ազատվեցին տառապանքներից ու վշտերից, իսկ հիվանդներն էլ բժշկություն գտան: Անգամ մեռյալները կենդանություն են ստանում, ինչպես բարեպաշտ Տաբիթան Սուրբ Պետրոս առաքյալի ձեռքով մեռած վիճակից վերակենդանացավ այն այրիների աղաչանքով, որոնց ողորմություն էր արել (Գործք 9: 36–42): Նախքան Պետրոս առաքյալի ձեռքը մեկնելն ու կենդանացնելը, այրիները ողբում էին և ցույց տալիս, թե որքան հագուստներ և զգեստներ է իրենց համար կարել տվել Տաբիթան:

Մարդուն ողորմության են մղում սերը և կարեցանքը մերձավորի հանդեպ, քանի որ առանց սիրո և կարեկցանքի՝ որևէ մեկը չի կարողանա իսկական ողորմություն տալ: Ողորմած մարդն Աստծո պատկերն է երկրի վրա, քանի որ Աստված բարեգութ է Իր արարչության հանդեպ: Տերն Իր անսահման մարդասիրությամբ ողորմեց և ներեց նույնիսկ չարագործներին, որոնք Իրեն խաչեցին:

Հոգևոր ողորմությունը ոչ պակաս է նյութական ողորմությունից: Պողոս առաքյալն ասում է. «Աստված մխիթարում է մեզ մեր բոլոր նեղությունների մեջ, որպեսզի մենք էլ կարող լինենք մխիթարելու նրանց, ովքեր ամեն տեսակ նեղությունների մեջ են, այն մխիթարությամբ, որով մենք ենք մխիթարվում Աստծուց» (Բ Կորնթ. 1:4): Արդ՝ եթե Աստված մխիթարում է մեզ, մենք ևս պարտավոր ենք մխիթարել միմյանց բոլոր նեղությունների ժամանակ, և «Աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն, և ըստ նրա տվածի էլ՝ Աստված պիտի հատուցի նրան» (Առակ. 19:17):

Սուրբ Գրքում շատ են ողորմության դրվագները, որոնք դարձել են բոլոր ժամանակների համար ընդօրինակելի: Այս առումով դասական է, օրինակ, մեծահարուստ Զաքեոս մաքսավորի՝ աղքատներին օգնելու հանձնառությունը: Երբ Հիսուս Երիքովում շրջում էր, Զաքեոսը ցանկանում է Նրան տեսնել, սակայն բազմության պատճառով չի կարողանում: Եվ քանի որ կարճահասակ էր, բարձրանում է ժանտաթզենու վրա, «որպեսզի տեսնի Նրան, որովհետև Նա հենց այդտեղով էր անցնելու» (Ղուկ. 19:4): Հիսուս, տեսնելով Զաքեոսին, կանչում է նրան և ասում, որ այդ օրը պետք է գիշերի նրա տանը: Զաքեոսն ուրախությամբ ընդունում է Տիրոջը և ասում. «Տեր, ահա իմ ինչքերի կեսը կտամ աղքատներին, և եթե որևէ մեկին զրկել եմ, քառապատիկ կհատուցեմ» (Ղուկ. 19:8): Զաքեոսի խոսքերն արժանանում են Տիրոջ գնահատանքին. «Այսօր այս տան համար փրկություն եղավ» (Ղուկ. 19:9):

Որքան էլ կարևորվում են ողորմած լինելն ու կարեկցանքը, սակայն Ավետարանն ուսուցանում է, որ այդ ամենը պետք է կատարվի գաղտնաբար. «Զգույշ եղեք, որ ձեր ողորմությունը մարդկանց առջև չանեք, որպես թե այն լիներ ի ցույց նրանց. այլապես վարձ չեք ընդունի ձեր Հորից, որ երկնքում է» (Մատթ. 6:1): Սա է ճշմարիտ ողորմության կերպը, այս է քրիստոնյային վայել վարքը. «Այլ երբ ողորմություն անես, փող մի հնչեցրու քո առջև, ինչպես անում են կեղծավորները ժողովարաններում և հրապարակներում, որպեսզի փառավորվեն մարդկանցից: Ճշմարիտ եմ ասում, այդ իսկ է նրանց վարձը: Այլ երբ դու ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը, որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի, և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես» (Մատթ. 6:2–4):

Ծաղկանուշ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Դպրական զգեստներ և ծիսական պարագաներ

«Ցնծասցէ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան, իբրև փեսայի եդ ինձ պսակ, եւ որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»

(Պատարագչի զգեստավորման աղոթք, Խորհրդատետր):

Եկեղեցում կամ այլ վայրերում ծիսական արարողակարգերի ժամանակ յուրաքանչյուր քրիստոնյա կարող է տեսնել հոգևորականների, որոնք զգեստավորված են ծիսական գունավոր հանդերձանքով և օգտագործում են տարբեր պարագաներ: Արժե ճանաչել և իմանալ, թե յուրաքանչյուր ծիսական զգեստ և իր երբ է կիրառվում, ինչո՞ւ է կիրառվում, ի՞նչ խորհուրդ ունի, և ո՞վ իրավունք ունի այն կրել, օգտագործել:

Կրոնական պաշտամունքի ժամանակ զգեստների և ծիսական պարագաների գործածությունը դեռևս գալիս է հինկտակարանյան ժամանակաշրջանից, երբ Աստված Մովսեսին պատվիրեց Ահարոնի համար զգեստներ պատրաստել. «Դու Իսրայելի որդիներից քեզ մոտ կբերես քո եղբայր Ահարոնին, նրա հետ նաև նրա որդիներին՝ Նաբադին ու Աբիուդին, Եղիազարին ու Իթամարին, որպեսզի ինձ համար քահանայություն անեն: Ի պատիվ և ի փառս քո եղբայր Ահարոնի՝ սրբազան զգեստներ կպատրաստես: Դու կխոսես մտքով իմաստուն բոլոր մարդկանց հետ, որոնց ես իմաստության ոգով եմ լցրել, որ նրանք Ահարոնին սրբազան զգեստներ պատրաստեն սրբության համար, որոնցով էլ նա քահանայության պաշտոն է կատարելու ինձ համար: Սրանք են այն զգեստները, որ նրանք պիտի պատրաստեն. մինչև ոտքի թաթերը հասնող երկարավուն զգեստ, ուսի ու լանջի վակասներ, բեհեզե պատմուճան, խույր և գոտի: Սրբազան զգեստներ թող պատրաստեն քո եղբայր Ահարոնի ու նրա որդիների համար, որպեսզի ինձ համար քահանայություն անեն» (Ելք 28.1–4):

Հայ եկեղեցականի զգեստներն ու ծիսական պարագաները ժամանակի ընթացքում ենթարկվել են տարբեր փոփոխությունների և դարերի խորքից հասել մեզ այնպիսին, ինչպիսին որ տեսնում ենք զանազան եկեղեցապաշտական արարողությունների ժամանակ:

Մինչ անդրադառնալը դպրաց դասի հանդերձանքի և ծիսական պարագաների կիրառությանն ու նշանակությանը, նախ հասկանանք, թե ինչպես է դասակարգված մեր Եկեղեցու նվիրապետական համակարգը: «Նվիրապետություն» (իտալերեն՝ gerarchia, հունարեն՝ τελεταρχια) նշանակում է «սրբազնագործ եկեղեցականների դասակարգ, հոգևորականություն» (Հայերեն բացատրական բառարան, հտ. Գ), «եկեղեցական դասակարգ (իր ամենախոնարհ աստիճանաւորէն մինչև բարձրագոյնն ընդգրկող կարգ). հոգևորականութիւն. 2. որևէ դասաւորում (ստորադասէն մինչև բարձրաստիճան). կարգապետութիւն» (Հայոց լեզուի նոր բառարան): Եկեղեցական նվիրապետության մեջ մտնում են բոլոր աստիճանները, որոնք տրվում են ձեռնադրությամբ և տվչությամբ: «Նվիրապետություն» բառի հիմքում ընկած է «նվեր» արմատը, որ եկեղեցական իմաստով նշանակում է պատարագ, զոհ, ընծա: Նվիրապետական յուրաքանչյուր աստիճան ունեցող անձին տրվում են առանձին իշխանություն ու կոչում, և իր ստացած աստիճանի իրավասության սահմաններում նա կարող է պաշտոնավարել, ծառայել, նվիրագործել, աղոթել, պատարագել: Իսկ «նվիրապետ» բառը հայերենում նշանակում է «բարձրագույն հոգևորական. քահանայապետ, կաթողիկոս»:

Հայոց Եկեղեցու նվիրապետական հինդասյա համակարգը, ձևավորվելով և արմատավորվելով Ս. Թադեոս առաքյալի հիմնած աթոռից, իր ուրույն տեղն է գրավում Ընդհանրական Եկեղեցում: Հայ Եկեղեցում նվիրապետական կարգի գլուխն է Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Այսօր մեր Եկեղեցու նվիրապետական կառույցը դասակարգված է հետևյալ կերպ.

1. Դռնապանություն,
2. Ընթերցողություն,
3. Երդմնեցուցչություն,
4. Ջահընկալություն,
5. Կիսասարկավագություն,
6. Սարկավագություն,
7. Քահանայություն,
8. Եպիսկոպոսություն,
9. Կաթողիկոսություն:

Բացի վերոհիշյալ նվիրապետական աստիճաններից՝ մեր Եկեղեցում կան այլ կարգեր և տվչություններ, որոնց ընթացքում հոգևորականներին տրվում են որոշակի պաշտոններ, կարգեր և աստիճաններ: Այդպիսի ծիսական արարողակարգերից են վարդապետական և ծայրագույն վարդապետական տվչությունը, ուրարի տվչությունը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ քահանաներին ավագության, լանջախաչ կրելու, եպիսկոպոսներին՝ արքության տիտղոսների տվչությունը և այլն:

Ինչպես նշեցինք, Հայ Եկեղեցու առաջին չորս աստիճաններն են դռնապանությունը, ընթերցողությունը, երդմնեցուցչությունը և ջահընկալությունը: Այս բոլոր աստիճաններն ունեցող անձը կոչվում է դպիր: Ձեռնադրության Մաշտոց ծիսամատյաններում կա ցուցում, ըստ որի՝ դպրաց դասի մեջ է ներառված նաև կիսասարկավագության աստիճանը. «Հինգերորդ կարգ կիսասարկաւագին, որ է դպիրն»: Նախ հասկանանք, թե դպրաց դասի մեջ մտնող վերոհիշյալ 4 աստիճաններից յուրաքանչյուրն ինչ պարտականություններ և իրավունքներ ունի:

Ըստ Մաշտոց ծիսարանի՝ մինչև դպրական աստիճանի տվչությունն անձը նախ սաղմոսերգուի և ավելածուի պաշտոնները պետք է ստանա: Սաղմոսերգուին իրավունք է տրվում սաղմոսներ ընթերցելու եկեղեցական արարողությունների ժամանակ: Անձն իր առաջին քայլն է անում հոգևոր ասպարեզում: Արարողությունը կատարող եպիսկոպոսը խաչաձև կտրում է ընծայացուի մազից մի հատված, որով նվիրյալը մուտք է գործում հոգևոր կյանք՝ հրաժարվելով երկրավոր աշխարհի ցանկություններից: Մյուս պաշտոնն ավելածուն է, որը պետք է հետևի և մասնակցի եկեղեցու մաքրությանը: Այս պաշտոններն ունեցող անձինք եկեղեցու խոնարհագույն ծառայողներն են և նրանց այլ կերպ անվանում են կղերիկոսներ:

Դպրության առաջին աստիճանը դռնապանությունն է: Այս աստիճանն ունեցող անձն իրավունք է ստանում բացելու և փակելու եկեղեցու դուռը: Այս կարգը, համաձայն Մաշտոց ծիսարանի, պետք է կատարվի եկեղեցուց դուրս:

Հաջորդ աստիճանն ընթերցողությունն է. այն, ըստ Մաշտոցի, տրվում է եկեղեցու ներսում (սկզբնամասում): Ընթերցողին իրավունք է տրվում եկեղեցական արարողությունների ժամանակ կարդալ Աստվածաշունչ. «Մ՛ռ զգիրս զայս և լեր աստուածային բանին պատմող և տեղեկացիր նոցին: Եթէ ուղիղ մտօք և հոգւով զգործս քո պաշտես, կալցես բաժին ընդ ժողովս սրբոց և սիրողացն Աստուծոյ. և դու եղբա՛յր՝ որ լինիս ընթերցօղ ի տան Աստուծոյ՝ զգործս քո զգուշութեամբ կատարեա՛» (Ձեռնադրության Մաշտոց):

Դպրության երրորդ աստիճանը երդմնեցուցչությունն է, որը, համաձայն Մաշտոց ծիսարանի, տրվում է եկեղեցու կենտրոնական մասում: Երդմնեցուցիչն իրավունք է ստանում հալածել դևերին, «....զի զօրասցի բարբառով բերանոյ հալածել զպիղծ ոգիսն և զաղտեղիս...»: Եպիսկոպոսը Մաշտոց ծիսական գիրքն է տալիս նվիրյալին՝ ասելով. «Ընկալ և ամփոփեա՛ զգրեալս աստ ի միտս քո. քանզի տամ քեզ հրաման դնել զձեռն քո ի վերայ հիւանդաց, և որք գան ի մկրտութիւն՝ հրաժարեցուցանել...» (Ձեռնադրության Մաշտոց): Այսինքն՝ երդմնեցուցչին իրավունք է տրվում ձեռքը դնելու հիվանդների վրա և աղոթելու նրանց համար, ինչպես նաև մկրտության ժամանակ մկրտության եկողներին «հրաժարեցնել սատանայից և ամեն չար զորություններից»: «Գործք առաքելոց»-ում կա հիշատակություն երդվեցնողների մասին. «Շրջիկ հրեաներից ոմանք, որ երդուեցնողներ էին, յանդգնեցին Տէր Յիսուսի անունը կանչել չար ոգիներ ունեցողների վրայ՝ ասելով. «Երդուեցնում եմ ձեզ Յիսուսով, որին քարոզում է Պողոսը» (Գործք 19.13):

Դպրության չորրորդ աստիճանը ջահընկալությունն է: Ջահընկալի պարտականությունն է վառել եկեղեցու մոմերը, կանթեղները, Պատարագի համար պատրաստել նշխարն ու գինին: Եպիսկոպոսը վառված աշտանակը տալիս է նվիրյալին՝ ասելով. «Ընկա՛լ զաշտանակ լապտերիս, և ունիս իշխանութիւն լուցանել զջահս և զկանթեղս ի սուրբ եկեղեցիս», ապա բաժակամանն է տալիս՝ ասելով. «Մ՛ռ զբաժակամանս զայս՝ լնուլ ի սա զգինի ի սպաս խորհրդոյն»: ➥ էջ 8

Կյանքի խոհափիլիսոփայությունը «Ժողովող» գրքում

➥ էջ 6

Կյանքը ոչ այլ ինչ է, քան շնչառություն՝ լինի դա արագ կամ թույլ. մարդը կենդանի է, որքանով որ շնչում է օդը:

Դավիթ սաղմոսերգուն ասում է, որ մարդը գոլորշի է, նրա գոյությունն ընդունայն է, վաղորդայնի անհետացող մառախուղի պես. «Ահա սահման դրիր իմ օրերին, // Եվ կարողությանս ուժը ոչինչ է իմ առջև, // Որով բոլորովին ունայն է ամեն մսեղեն մարդ» (38:6), «Կշտամբելով մեղքերի համար՝ խրատեցիր մարդուն, // Սարդոստայնի պես մաշեցիր նրա անձը, // Սակայն ունայն է ամեն մարդ» (38:12), «Սակայն ընդունայն են որդիք մարդկան, սուտ են որդիք մարդկան, ի կշիռս իւրեանց մեղանչեն, եւ ինքեանք յունայնութեան են ի միասին» (62:10), «Տէ՛ր, ո՞վ է մարդը, որ հայտնվեցիր նրան, // Կամ մարդու որդին, որ հաշվի ես առնում նրան: // Մարդը նմանվեց ունայնության, // Եվ նրա օրերը ստվերի պես են անցնում» (143:3–4):

Մարդկային կարգավանց իրականության մեջ միայն Տիրոջն ապավինելու դեպքում է փրկությունը երաշխավորվում, մարդկային ջանքերը չնչին են ու անարժեք. «....քեզ չեն փրկելու քո նեղությունից. դրանց բոլորին հողմերը պիտի տանեն, և մրրիկները բաժան-բաժան պիտի անեն: Իսկ նրանք, ովքեր ինձ վրա են հույս դրել, պիտի ստանան երկիրը և ժառանգեն իմ սուրբ լեռը» (հմմտ. գրաբար՝ «....ոչ ապրեցուսցեն զքեզ ի նեղութենէ քումմէ. զի զամենեսեան զնոսա հողմք առցեն (եբր.՝ բարձցէ ունայնութիւն), եւ մրրիկք բաժանեսցեն. իսկ որ յիսն յուսացեալ են՝ ստասցին զերկիր, եւ ժառանգեսցեն զլեառն սրբութեան իմոյ») (Ես. 57:13):

Սողոմոնն ուսումնասիրում է աշխարհի «գոլորշի» բնավորությունը մի քանի ոլորտներում: Արարչի կողմից ստեղծվում է եդեմական մաքրաջինջ պարտեզը (Ժող. 2:1–11, հմմտ. Ծննդ. 2:8–25): Սողոմոնը, ամփոփելով Տիրոջ գործունեությունը, ստեղծվածը ևս համարում է ունայն՝ «գոլորշի». «Աչք նետեցի իմ ձեռքերի կատարած բոլոր գործերին և դրանք անելու համար իմ կրած հոգնություններին, և ահա ամեն ինչ ունայնություն է, քամուն բռնելու նման, և ոչ մի օգուտ չկա արեգակի ներքո» (2:11): Նա իմաստությանն է հետամուտ, բայց քանի որ իմաստուններին ու հիմարներին նույն վախճանն է սպասում, համարում է՝ իմաստունն առավելություն չունի (2:12–17): Նա փորձում է զարգացնել իր հմտությունները և իմաստություն ձեռք բերել, բայց գիտակցում է, որ ինքը վերահսկողություն չունի իր աշխատանքի վերջնարդյունքի վրա, քանի որ հիմարը կարող է այն ժառանգել և փչացնել ու խեղաթյուրել (2:18–23): Ի վերջո, կյանքը ցավ ու տառապանք է. «Նրա բոլոր օրերը ցավերով են լի և զբաղումները՝ տրտմությամբ, և նույնիսկ գիշերը նրա սիրտը չի ննջում: Սակայն սա ևս ունայնություն է» (2:23):

Երբ Սողոմոնն ասում է՝ ամեն ինչ «գոլորշի» է, նա չի ասում, որ ամեն ինչ անիմաստ է կամ անմտորեն հղացված. նա ասում է, որ ամեն ինչ ժամանակավոր է. այն գոլորշիանում է, անհայտանում: Ժամանակի ընթացքում մարդկային բոլոր ունակությունները և նվաճումները կորցնում են իրենց իմաստը, ենթարկվում ժամանակի քայքայմանը: Մարդկային բոլոր մտքերը թռիչքային են. կյանքը սեղմ ու կարճ է: Մահն այն հիմնական միջոցն է, որը կյանքը գոլորշի է դարձնում: Այն, ինչ իմաստությունը դարձնում է «քամու հետապնդում», այն փաստն է, որ մահանում են և՛ հիմարները, և՛ իմաստունները: Իմաստությամբ ապրողն առավելություն ունի, բայց իմաստությունը չի օգնում որևէ մեկին խուսափել այս վերջնական ավարտից:

Ժամանակի ընթացքում «ունայնություն» բառը ձեռք բերեց նոր իմաստ ևս. սեփական կարողությունների կամ գրավչության նկատմամբ չափից դուրս հավատ՝ համեմատած ուրիշների հետ: Մինչև 14-րդ դարն այն չուներ նման եսապաշտական ենթատեքստ և պարզապես նշանակում էր անիմաստություն: Բազմաթիվ կրոններում ունայնությունը, իր ժամանակակից իմաստով, համարվում է ինքնակռապաշտության ձև, որտեղ մարդն իրեն նմանեցնում է Աստծուն՝ ընդգծելով սեփական կերպարը և դրանով իսկ ժամանակի ընթացքում կորցնելով աստվածային նմանությունը:

Փիլիսոփայության մեջ ունայնությունը ներկայացվում է որպես եսակենտրոնության և հպարտության ավելի լայն դրսևորում: Ֆրիդրիխ Նիցշեն գրել է, որ «ունայնությունը ինքնատիպ երևալու վախն է. հետևաբար՝ դա հպարտության պակաս է, բայց ոչ ինքնատիպության բացակայություն»:

Արևմտյան արվեստում ունայնությունը հաճախ խորհրդանշական կերպով պատկերվում էր սիրամարգի տեսքով, իսկ աստվածաշնչյան բնագրում՝ Բաբելոնի պոռնիկի կերպարով: Վերածննդի ժամանակ ունայնությունը ներկայացվում էր որպես մերկ կին՝ երբեմն նստած կամ պառկած բազմոցի վրա՝ մազերը սանրով և հայելիով խնամելիս: Ունայնության խորհրդանիշերը ներառում են զարդեր, ոսկե մետաղադրամներ, քսակը և մահվան պատկերը: Ունայնության որոշ պատկերներ ներառում են մագաղաթներ, որոնց վրա գրված է Omnia Vanitas («Ամեն ինչ ունայնություն է»), որը լատիներեն Աստվածաշնչի Ժողովողի գրքից հայտնի մեջբերումն է:

Այսպիսով՝ վեր հանելով «Ժողովող» գրքում բովանդակային հիմնական հղացքները՝ պարզ դարձավ, որ առակավոր խոսքում և առած-ասացվածքների մեջ գրքի ինքնօրինակ իմաստությունը դրսևորվում է սողոմոնյան մյուս գրքերից տարբերվող իմաստութենական շեշտադրումներով և աստվածաբանական անզուգական լեզվամտածողությամբ:

ՕՖԵԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Եվան և Սառան՝ հավատքի նախամայրեր. մարդու անկումը և Աստծո փրկագործությունը

Հին Կտակարանի առաջին գիրքը՝ Ծննդոցը, մի կողմից աշխարհի արարման հիասքանչ պատմությունն է, մյուս կողմից՝ մարդկային կյանքի ու բարոյական սխալների խորունկ խորհրդածությունը: Գիրքն ուսումնասիրելիս հաճախ մոռացության է մատնվում մի կարևոր շերտ՝ կանանց ներկայությունը, որոնք ուրույն դերակատարություն ունեն մարդկության պատմության մեջ: Նրանք միայն մայրեր կամ կողակիցներ չեն, այլև հավատքի կենսարար հենասյուներ՝ երբեմն լռելյայն, բայց անսասան հավատքով:

Աստվածաշունչը մեզ է փոխանցում մի շարք կանանց կյանքի պատմություններ, որոնց կերպարներում միախառնված են հավատքի ուժը, մարդկային անկատարությունը և աստվածային ներումը: Այդ կանանցից են Եվան և Սառան. նրանք ոչ միայն կենսաբանական նախամայրեր են, այլև հոգևոր նախատիպեր՝ մարդկության վաղ շրջանի և Աստծո խոստման իրականացման պատմության մեջ: Եվան՝ որպես նախամայր, ներկայացնում է մարդու ազատ կամքը, իսկ Սառան մարմնավորում է հավատքի կայուն ընթացքը և Աստծու կողմից տրված խոստումին հավատարմությունը: Նրանց կերպարների ուսումնասիրությունը բացահայտում է մարդկային բնության բարդությունները և աստվածային ծրագրի ներքին տրամաբանությունը:

Ծննդոց գրքում հիշատակվող առաջին կինը՝ Եվան, Աստծո պատկերով ստեղծված մարդու երկրորդ կեսն է: Եվայի կերպարը ձևավորվում է աշխարհի արարման սկզբում. «Տեր Աստված ասաց. լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությամբ մի օգնական ստեղծենք նրա համար» (Ծնն. 2.18): Եվան ոչ միայն Ադամի լրացումն է, այլև Աստծո ստեղծագործական մտադրության մի անբաժանելի մասնիկը: Մարդկության առաջին կինը՝ Եվան, բազմիցս ներկայացվել է որպես մեղքի, անկման ու մահվան պատճառ: Սակայն այս մեկնաբանությունն աստվածաշնչյան իրականության միայն մի կողմն է: Ծննդոց գրքի խորքային ընթերցումը բացահայտում է Եվայի կերպարը՝ որպես ազատ կամքի սկզբնավորող և էթիկական ընտրության խորհրդանիշ: Եվան ստեղծվում է նույն՝ աստվածային պատկերով, ինչ Ադամը (Ծնն. 1.27), և նրանց առաքելությունը մեկն էր. երկուսն էլ կոչված էին մշակելու և պահելու դրախտը: Սակայն ընտրությունը՝ «բարու և չարի գիտության ծառից չուտելու» պատվիրանազանցությունը, բացում է նոր էջ մարդու ինքնագիտակցության մեջ:

Եվայի ընտրությունը՝ Աստծո պատվիրանը խախտելը, հաճախ դիտվում է իբրև թուլության և առաջին իսկ պահին գայթակղության հետևանք, սակայն կարելի է ասել, որ այս արարքն առաջին անգամ դրսևորում է մարդու ազատ կամքը, որին Աստված չի միջամտում: Ի տարբերություն հրեշտակների՝ մարդն ստանում է ընտրության իրավունք՝ հետևել կամ չհետևել Տիրոջ խոսքին: Եվան այս ընտրությամբ դառնում է առաջին փորձառու մարդը, որ գիտակցում է մեղքի ծանրությունը, ցավը, սակայն նաև ապաշխարության և նոր կյանքի ճանապարհը:

Աստվածաշնչյան պատմության մեջ Եվան չի լքում սրբազան հարթակը: Նա դառնում է ողջ մարդկության նախամայր (Ծնն. 3.20)՝ կրելով իր մեջ թե՛ անկման ու մահվան և թե՛ կյանքի շարունակականության խորհուրդը: Մեզ համար Եվան խորհրդանշում է ազատ ընտրության ողբերգական, բայց նաև արժանապատիվ հնարավորությունը: Նա մեզ հիշեցնում է, որ նույնիսկ սխալ ընտրությունից հետո աստվածային ներման և փրկության ճանապարհը բաց է:

Եթե Հին Ուխտում Եվան հանդես է գալիս որպես անկման նախապատմություն, ապա Նոր Ուխտում նրա կերպարը վերաիմաստավորվում է՝ դառնալով մարդկային խոցելիության, հավատքի լարումների ու վերականգնման կարիքի փոխաբերություն: Պողոս առաքյալն իր ուղերձներում Եվայի մասին հիշատակում է որպես խաբեության զոհի, բայց ոչ որպես մեղքի գլխավոր պատասխանատուի: Այդ առումով Նոր Կտակարանի աստվածաբանությունը միտված է մեղքը վերագրելու Ադամին՝ իբրև մարդկության գլխի, մինչ Եվան ներկայացվում է իբրև հոգևոր զգուշության նախատիպ, որի կերպարը վերստին հիշեցնում է մարդկային ազատ կամքի վտանգը:

Բ Կորնթացիս 11.3-ում Եվայի խաբված լինելը դառնում է օրինակ եկեղեցու համար, որ անհնազանդությունը ծնվում է մաքուր ու պարզ հավատքի աղավաղումից: Եվան խորհրդանշում է ոչ թե կնոջ մեղսալի լինելը բնույթով, այլ հավատքի փխրունությունը՝ առանց Աստծու խոսքի գիտակից պահպանման:

1 Տիմոթեոս 2.13–15 հատվածը, չնայած իր պատմական բարդությանը, մատնանշում է Եվայի կերպարը արարածական կարգի և փրկության ներգործության միջև՝ եզրահանգելով, որ կինը կարող է փրկվել, եթե մանուկներ ծնելով՝ ապրի հավատքով ու սրբությամբ: Այստեղ ծնունդը կարելի է մեկնաբանել մարիամական իմաստով. ինչպես Մարիամը՝ նոր Եվան, կյանք տվեց Քրիստոսին, այնպես և յուրաքանչյուրը կարող է հավատքի միջոցով կյանք հաղորդել իր շրջապատին:

Այսպիսով՝ Նոր Կտակարանում Եվայի կերպարը դառնում է նախապատմություն այն կանանց համար, որոնք ապրում են ճշմարտության մեջ, հաղթահարում գայթակղությունը խոհեմությամբ ու հավատքով:

Եվայի դերը չի սահմանափակվում մեղք գործելով. նա նաև մայր է դառնում, երեք որդի ունենում (Կայենին, Աբել, Սեթ)՝ շարունակելով կյանքի շղթան: Նրա կյանքի պատմությունը միաժամանակ ցավոտ և հուսադրող ուղերձ է. մարդու անկումի պայմաններում էլ Աստված շարունակում է իր փրկագործ ծրագիրը:

Ծննդոց գրքում առանձնացող հաջորդ կինը Սառան է՝ Աբրահամի կողակիցն ու համայն հրեաների նախամայրը: Սառան,

Յուլիուս Շնոր ֆոն Կարոլսֆելդ. Ադամը և Եվան, 1860 թ.

ի տարբերություն Եվայի, Աստծո ծրագրում հայտնվում է հավատքի պատմության որոշիչ փուլում: Աստված կանչում է Աբրահամին՝ դառնալու մեծ ազգի հայր, և Սառան դառնում է այդ խոստման անմիջական կրողը: Հատկանշական է, որ աստվածային հայտնությունն ուղղվում է ոչ միայն Աբրահամին, այլև Սառային. «Ես կօրհնեմ նրան և նրա միջոցով քեզ զավակ կպարգևեմ» (Ծնն. 17.16):

Ծննդոց գրքում Սառան ներկայանում է որպես մի կին, որի կյանքը հյուսված է սպասման, հուսահատության, կասկածի և վերջապես իրագործված հավատի պատմությունից: Նրա կյանքը մի յուրօրինակ հոգևոր ճանապարհ է, որտեղ մարդկային տկարությունն աստիճանաբար փոխակերպվում է հավատքի ամրության: Աստծո խոստումը՝ Սառային որդի պարգևելու մասին, ի սկզբանե թվում է անհավատալի: Սառան ծեր է, տարիներ շարունակ ամուլ, իսկ խոստումը՝ հեգնական: Նա անգամ ծիծաղում է՝ լսելով, որ մի օր մայր է դառնալու (Ծնն. 18.12): Սակայն այդ ծիծաղը զուտ կասկած չէ. այն արտահայտում է մարդու սրտի խորքում բորբոքվող հույզերը՝ միախառնված ակնկալիքի, ցավի ու թաքուն ցանկության հետ: Աստված, ի պատասխան, վերածում է այդ ծիծաղը ուրախության. Իսահակ անունը՝ «ծիծաղ», դառնում է հավերժ հիշատակում Սառայի հավատքի հաղթանակի:

Սառան միակն է կանանցից, որի մահը և թաղման վայրը՝ Մակփելայի քարանձավը, հատուկ ընդգծված են Սուրբ Գրքում (Ծնն. 23.19): Դա պատահական չէ: Նրա կյանքը վկայություն է այն ճշմարտության, որ Աստվածաշնչում կնոջ դերը միայն տղամարդու առաքելությանն աջակցելը չէ, այլև նրա ուրույն հավատքը և ուղիղ հարաբերությունը: Սառայի կերպարը մեզ սովորեցնում է համբերություն՝ հոգևոր խոստումների կատարման ճանապարհին: Նա մեր հոգևոր նախամայրն է, որի կերպարում տեսնում ենք ոչ թե կատարյալ հավատացյալի, այլ մի կնոջ, որը կասկածում է, հարցնում է, բայց չի դադարում մնալ խոստման շրջանակում: Իսկ հավատքը, ինչպես ասում է Պողոս առաքյալը, «հուսացած բաների հաստատում» է (Եբր. 11.1), և Սառան այդ վստահության կենդանի խորհրդանիշն է:

Եվան և Սառան՝ երկու նախամայր, կանգնած են մարդկության փրկագործ պատմության տարբեր առանցքներում: Եվան ցույց է տալիս, թե ինչպես կարող է մարդու ընտրությունը խախտել ներդաշնակությունը, բայց միաժամանակ դառնալ աստվածային գթության դռնբաց: Սառան՝ հակառակ բոլոր բնական հնարավորություններին, դառնում է հավատքի նախօրինակ. նրա միջոցով աշխարհ է գալիս խոստումնաբաշխ ժառանգությունը:

Եվան խորհրդանշում է, որ մեղքն ունի ճակատագրական հետևանքներ, իսկ Սառան հիշեցնում է, որ հավատքը պարգևատրվում է, նույնիսկ երբ այն լիարժեք չէ: Այս կերպարները որքան էլ հակադիր թվան, միավորվում են մեկ ճշմարտության շուրջ. Աստծո ծրագիրն իրագործվում է նույնիսկ մարդկային անկատարության պայմաններում: Այդպես նրանք երկուսն էլ դառնում են նախամայրեր՝ ոչ միայն ըստ մարմնի, այլև ըստ հոգու:

Սառայի կերպարում միաժամանակ դրսևորվում են մարդկային թուլությունը և աստվածային հավատարմությանն արձագանքելու կարողությունը: Նրա ծիծաղը՝ ի պատասխան հրեշտակի խոստմանը («Եվ Սառան ծիծաղեց իր ներսում», Ծնն. 18.12), արտահայտում է մարդկային թերահավատությունը, անհնարինը հնարավոր համարելու տարակուսանքը: Բայց այդ նույն Սառան հետագայում հիշվում է որպես հավատքի օրինակ. «Հավատով ինքը Սառան էլ, որ ամուլ էր, որդեծնության սերմն ստանալու զորությունն ունեցավ և ծնեց առաջացած տարիքում, քանի որ հավատարիմ համարեց նրան, ով խոստացավ այդ բանը» (Եբր. 11.11):

Սառայի պատմությունը նաև ընտանեկան բարդությունների պատմություն է: Ագարի՝ աղախնու միջոցով ժառանգ ունենալու նրա որոշումը (Ծնն. 16.2) ցույց է տալիս, թե ինչպես կարող է մարդը օգնել Աստծուն՝ հաճախ հարուցելով ցավոտ հետևանքներ: Սակայն Աստված մնում է հավատարիմ Իր խոստմանը. Իսահակը ծնվում է, և Սառան ասում է. «Աստված ուրախություն պարգևեց ինձ, և ով որ լսի այդ մասին, ինձ հետ կուրախանա» (Ծնն. 21.6):

Մելինե Գրիգորյան

Դպրական զգեստներ և ծիսական պարագաներ

➥ էջ 7

Ամփոփելով՝ պետք է արձանագրել, որ դպիրն իրավունք ունի ստորև ներկայացվող ծիսական պարագաներից օգտվել և իր սպասավորությունը բերել եկեղեցուն հետևյալ կերպ՝

• եկեղեցին մաքրել, սաղմոս կարդալ ժամերգությունների ժամանակ (*ժամագրքով*),

• եկեղեցու դուռը փակել և բանալ *բանալիով*,

• սուրբգրային ընթերցումներ կարդալ *Աստվածաշնչից* կամ *Ճաշոցից*, «հրաժարեցնել» մկրտության եկած անձանց *(Մաշտոց ծիսամատյանի* կիրառմամբ), բժշկության աղոթք կարդալ՝ ձեռքը դնելով հիվանդի վրա,

• եկեղեցու *մոմերը, կանթեղները* վառել, *նշխար* գործել և Պատարագի *գինին* պատրաստել:

Դպրական աստիճանի և վերջինիս հետ կապված հարակից ծիսական պարագաների ներկայացումից հետո տեսնենք, թե ինչպիսի հանդերձանք ունեն դպիրները: Դպրական զգեստը կոչվում է շապիկ: Այն հասնում է ուսից մինչև գարշապար. վզից ներքև ուղիղ իջնող և մարմինը ամեն կողմից ծածկող, ամենաներքին եկեղեցական հագուստն է: Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ շապիկն առաջ վերևից ներքև հավասաբար բացված է եղել. երկու կողմերն իրար վրա են բերել և ծածկել: Օրմանյանը նշում է, որ շապիկի նյութը ճերմակ կտավից կամ սպիտակ բեհեզից է կարված եղել, սակայն այսօր այն տարբեր գույներով և նախշերով է կարված: Եկեղեցական շապիկի էական մաս է կազմում նաև ուսանոցը կամ թիկնոցը: Այն կարող են կրել դպրական շապիկի վրայից, «որ կը ծածկէ ուսերն ու թիկունքին վերի մասը եւ կուրծքին վրայէն կիջնէ գօտին» (Մաղաքիա արք. Օրմանեան): Հայ Եկեղեցում նույնպես շապիկի վրայից գործածվում են ուսանոցներ՝ թիկնոցի նմանությամբ (օրինակ՝ Երուսաղեմի և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարաններում և այլն): Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ դպրաց դասի շապիկները հիմնականում կարված են ուսանոցի հետ միասին, և սովորաբար լանջն ու թիկունքը զարդարված են գեղեցիկ նախշերով, խաչերով կամ պատկերներով: Այսօր շապիկ կարող են հագնել և՛ դպրական աստիճան ունեցող անձինք, և՛ հատուկ թույլտվությամբ, նաև եկեղեցու խորանում սպասավորող երեխաներ, մեծահասակներ, որոնք չունեն դպրի կոչում:

Առհասարակ, եկեղեցական շապիկը հոգևորականի առաջին զգեստն է, և բոլոր հոգևորականներն այն կրում են Պատարագի ժամանակ. քահանաները, աբեղաները, վարդապետները, ծայրագույն վարդապետները, եպիսկոպոսները, արքեպիսկոպոսները, պատրիարքները և կաթողիկոսը կրում են առանց ուսանոցի ճերմակ գույնի շապիկներ:

Եղիշե սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ
Սիրանուշ ԱԴՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 16.06.2025 թ.
Տպաքանակը՝ 1265